

## ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐ ՕՏԱՐ ԱՓԵՐՈՒՄ

Կոլիա Տ. Յովհաննիսեան



Ասում են հայի համար արեւը մայր չի մտնում...

Պարծենալու բան չէ, ողբերգութիւն է. այս դարաւոր փոքրիկ ժողովրդի կէսից ատիկն ապրում է հայրենիքից դուրս՝ դատապարտած լինելով աստիճանաբար

ուծացման: Կա՞յ այսպիսի մի այլ ժողովուրդ: Եթէ կայ ասացէք, մի քիչ մխիթարենք... Ե՞թէ չկայ՝ գոնէ մխիթարենք այն բանով, որ այս առումով աշխարհում առաջինն ենք...

Իւրաքանչիւր նոր բնակավայր իր անջնջելի կնիքն է դնում հայի ողջ էութեան վրայ, փոխում նրա բնորոշ բնութագծերը: Լեռնային ժողովրդի ըմբոստ ու անկաշկանդ որդին անյոյս թփրտում է նորագոյն տեխնոլոգիայի հետ զուգորդած արեւմտեան քաղաքակրթութեան ոստանի մէջ՝ անկարող լինելով ազատել դրա շողշողուն թելերից... Շարժումները դառնում են վերապահ, նրբանում են մատները, անարեւ երկրների ճերմակութիւնը խլում է նրա խելութիւնը... Հայը խեղճանում, կուչ է գալիս, ուժեղանում է ազգայնագործ մարդ-դէր, իր գոյութեան ու հանգրստաւետութեան համար պայքարող քաղքենին:

Ազգային բնութագծերի ակներեւ փոփոխութեանը զուգընթաց, տարիների ընթացքում երեւան են գալիս նաեւ ֆիզիոլոգիական տետայների ճշմարելի փոփոխութիւններ, որոնց ակամայից ականատես եղայ Ամերիկայում, զարմանքով ու հետաքրքրութեամբ:

\* \* \*

Լոս Անջելես քաղաքի առեւտրական ու վարչական հատաձում (Down Town), վեր է խոյանում բազմաթիւ մի շէնք, որի բաժանունները զբաղեցնում են բանկագին մետաղների ու ակնեղէնի վաճառականներ: Ընթրը ամբողջովին գտնում է անվտանգութեան սիստեմների ու զինւած համազգեստաւոր յատուկ պահակազօրի անմիջական հսկողութեան տակ:

Ընկերս, որի տանն էի իջեւանել, զբաղւում է գլխաւորապէս փիրուզայի եւ զուհատր բուստերի առեւտրով: Դա էր, որ հասնելուս հէնց երկրորդ օրը այցելեցի իր աշխատավայրը: Այնտեղ ուրոյն մի աշխարհ էր, առ ու ծախի տիպական մթնոլորտով, տոգորւած իր գրաւչութիւններով, գայթակղութիւններով, շահի մոլուցքից առթած երկմտութիւններով, լարածութեամբ, եւ այս բոլորը կոծկւած մաքուր առեւտրի ու փոխադարձ վստահութեան թափանցիկ քօղի տակ...

Առեւտրականները տեղացի հրեաներ են, պարսիկներ, մեքսիկացիներ, եւրոպայի զանազան ազգերի ներկայացուցիչներ ու նաեւ պատկանելի թուլ հայեր: Հայերի միջեւ տիրում է ոչ միայն առեւտրական, այլ նաեւ ազգային ատելի սերտ հաղորդակցութեան ոլորտ. յաճախ հանդիպում են իրար ու առօրեայ հարցերից բացի, առհասարակ խօսում են ամերիկահայ գաղութի, Հայաստանի, սփիւռ-

քահայութեան հրատապ խնդիրների ու ստահոգութիւնների մասին, որոնք նրանց յուզում են այնքան ժամանակ, որքան շօշափում են տուեալ հարցերը: Մնալով մենակ, նրանք անմիջապէս վերադառնում են բիզնեսի աշխարհը, որով հայկական հարցերը այնպէս էլ դուրս չեն գալիս բազմաթիւ շէնքի ամրակուտ պատերից...

Տեղեկանալով, որ «անդրծովեան աշխարհից» հիւր է եկել, նրանցից ոմանք եկան ընկերոջս հիմնարկը:

Սկզբում ուշադրութեան կենտրոնը ես էի. հարցեր էին տալիս մեր գաղութում ապրող հայերի մասին, երկրի քաղաքական ու տնտեսական դրութեան, յեղափոխութեան, կանանց ծածկոցների ու արտագաղթի մասին... Յետոյ խօսակցութիւնը ստաւ տարբեր հունի մէջ, մոռացան ինձ: Խօսում էին հէնց այնպէս, վիճում էին, մեղմ ձայնով, ինչ որ պարկուտ երանգներ իրենց շարժումների մէջ, ինչ որ յոգնածութիւն մի քանի բառ ասելիս, անախն, պարտում անտարբերութեան եւ իր վիճակից զոհ անհատի ինքնապատաստան մեծամտութեան շղարշով... «Բոլորովին հայի նման չեն», անցաւ մտքովս. ու յանկարծ զիտ արածի պէս անդրադարձայ, որ նրանք միանգամայն տարբերում են իրարից... նաեւ դէմքով: Ասել է, տեղին ու հանգամանքներին անծանօթ մէկը չէր կարող նոյնիսկ ենթադրել, որ այս մարդիկ պատկանում են մէկ ազգութեան: Մի պահ ուզեցի վեր կենալ ու ինձ նայել հայելու մէջ...

...Այս պատերից հազարաւոր մղոններ այն կողմ, ծովերից, քաղաքներից, տափաստաններից, լեռներից՝ Հայաստան աշխարհն է, այնտեղ ուր հիմքն է դրել այս սեւեակում հաւաքւած եօթ հայերի լինելութեանը, ապա դժխեմ ճակատագիրը նրանց նետել է դէս ու դէն, փոխել են տասնեակ սերունդներ, հոսել են շատ ջրեր ու... այժմ ճեւափոխւած հայեր կան Ամերիկեան այս արդիական շքեղ վաճառանոցի «օֆիսում». նրանք խօսում են հայերէն լեզուով, ի՞նչ փոյթ «արեւելահայերէն» թէ «արեւմտահայերէն»... ի՞նչ փոյթ կիսատ-պօստ, անճիշտ... Դեռ լաւ է, որ խօսում են հայերէն լեզուով...

Այստեղ միակ իսկական հայը անկասկած Երեւանից վերջերս գաղթած ընկերոջս պաշտօնեան կարող է համարել, երեւանցու առնական ծնօտով, թուխ դէմքով ու մազերով, արծաթքով, խաժ աչքերով ու հայաստանեան առողջանութեամբ: Նրա հայրը, պապերն ու ապապապերն ապրել են Հայաստանում ու երբէք չեն լքել հայրենի հողը՝ ազգայնութեան գլխաւոր ազգակիր: Նրանք Լեռնաշխարհի որդիներ են եղել, ներծծւած Լեռնաշխարհի գոյնով ու բոյրով, Լեռնաշխարհի կոպտութեամբ ու տոկունութեամբ: Հիմա, նրանց այս շառաւիղը այստեղ է, Ամերիկայում, մեր ժամանակների նոր Բարեկրում, ուր մարդիկ խօսում են հազար լեզուներով եւ դեռ Աստուած չի բարկացել այնքան, որ ջրհեղեղ անի... Ախր եղբայր, տնաւեր լա՛ճ, ո՞ր հովը բերեց ու շարսեց քեզ ովկիաններից այս կողմ...

Միբիացի ճաղատ հայն իր դիմագծերով ու ընդհանուր կառուցածքով շատ է տարբերում երեւանցի հայից. դէմքը կլոր է, սպիտակ մաշկով: Թրքական արհաւիրքներից ճողպարած ու արաբական երկրում ապաստան գտած հայի արծաթիքը մաշկ է, բարակ է եւ շրթերը, աչքերի մէջ սողոսկել են ծովագոյն երանգներ...

Թում է, թէ մենք իրանահայերս, թուլ երեք հոգի, ատելի քիչ ենք տարբերում հայաստանցի հայից: Բոլորս

# Ակնարկ

թարիզեցիներ ենք, իսկ Թափրզը շատ հեռու չէ Արաքս գետից: Այնուամենայնիւ, տարբերում ենք միմեանցից: Ամեն դէպքում կլիմայական ազդեցութիւնը իր գործը տեսել է: Մեր շարժումների, նիստ ու կացի ու արտայայտելու ձևերի մէջ ամօքայ են արեւելեան ընդգծած յարգանքի, մեծարանքի, երբեմն նոյնիսկ քծմանքի ցուցումները: Իսկ Հնդկաստանից եկած այս հա՛յր... Համոզուած եմ, եթէ ներս մտնելիս նա հայերէն չբարեւէր, մտքովս անգամ չէր անցնի, որ հայ է: Հնդկական մանր գանգուր մագեր, հաստ շրթունքներ, սեւ մաշկ ու սպիտակ փայլուն ատամներ... Նա շրջիկ առեւտրական է, բնակուած է Հնդկաստանում, գալիս է Ամերիկա գործով, այստեղ մի փոքրիկ «ֆլաք» ունի: Մտադիր է ԱՄՆ բերել իր ընտանիքին, գոհ չէ Հնդկաստանի հասարակական սպասարկութիւնից, զաւակների սպազան մտահոգում է նրան, անչափ հրպարտ է նրանց անգլերէնի իմացականութեամբ... Նոյն խօսքերը, նոյն մտատանջութիւնները, տույտանքները, Ամերիկա գնալու մարմանը... Որքան պիտի չենք այստեղից այնտեղ: Միթէ Ամերիկա՞ն է վերջին հանգրուանը: Իսկ Հայաստան՞ը, այս ր՞ով է մտածում Մայր Հայրենիքի մասին... Մա՞յր... Իսկ ի՞նչ Մայր, որը դռները լայն բացել է ոչ թէ յետ կանչելու իր տարագիր որդիներին, այլ ճամփայ դնելու նրանց օտար ափեր... Նայում եմ ընկերոջս Միլանում գտնուող մասնաճիւղի վարիչ՝ կապոյտ աչքերով, շէկ մագերով, երուպական շարժ ու ձեւով իտալացի հային: Ո՞վ կասի, թէ նա հայ է. նա այնքան հեռու է հայաստանցի հայից, որքան Իտալիան Հայաստանից, այնքան տարբեր է հնդկաստանցի հայից, որքան Հնդկաստանը Իտալիայից...

\*\*\*

... Չէ՛, նման չենք իրար: Ժամանակը իր խարանգ է դրել մեր ճակատին: Ինչպէս դուք ծխնիին՝ մեր հայ անունին էլ «ա» յօդակալով յարատւօրէն կցած է եղել մի այլ անուն, հասցէի նման... Դրանով ենք ճանաչուած, դրանով է որոշուած մեր ինքնութիւնը, մեր քաղաքացիական դէմքը: Մինչէ իսկ Ամերիկայում, ուր քոչում են աշխարհի շատ ծագերից, դարձեալ համարում ենք բէյրութահայ, իրանահայ, ֆրանսահայ, տարբերելով իրարից: Մենք գուրկ ենք անհատի բուն ազգայնութիւնը բնորոշող «ցի» մասնիկից... Պարզապէս հարիր տոկոս չենք, թէ այս ենք, թէ այն... Այնուամենայնիւ, մենք հայ ենք, դիմակայել ենք ու յաղթել նոյնիսկ ժամանակին ու հայ ենք մնացել, անգամ փոխած զանգաձեւերով, փոխած նկարագրով: Հեշտ չենք ապրել, կառչել ենք մեր ստեղծած մասունքներին, կարօտել ենք ու տանջուել, յանդուրժել շատ բան... Մի վարանք, բացէ՛ք մեր սիրտը՝ մեր անցագիրը, եւ այնտեղ կը գտնէք երեք տառ դաջած ամուր, անջնջելի... Հայի համար արեւը մայր չի մտնում... Միթէ այդքան շատ ե՞մք... Ո՛չ, դա չի նշանակում միայն, որ հայերն անդադար դեգերում են մեր մոլորակի բոլոր ծագերում, այլ այն, որ հայը ուր որ ուղք է դնում, պահում է իր ազգութիւնը, նոյնիսկ դարերով, թէկուզ աղճատուած ու ձեւափոխուած... ■

## Փրկէք... Ճար. էջ 20-ից

Ինչպէս տեսնում ենք այս հեշտ քննութիւնը կարելի է տանն էլ անցկացնել: 19 տարեկան մէկ երիտասարդ իր տարեկան բժշկական քննութիւն յանձնելուց յետոյ, բոլոր պատասխանները դրական էր ստացել: Նա նոր էր ընդունել համալսարան, երբ դեռ մէկ շաբաթ չանցած նրա ծնկերում ուռուցք նկատուեց եւ տարածուեց մինչէ ոտքի ծայրամասերը, քննութիւնից յետոյ պարզուեց, որ երիկամների գործունէութեան խախտման հետեւանք էր դա: Մէկ տարի նա բուժուեց դեղամիջոցներով, որից յետոյ միայն կարողացաւ շարունակել համալսարանի դասերը: Նա հանգել էր այն եզրակացութեան, որ եթէ բժշկական քննութեան ժամանակ բժիշկը իրենից մէզի քննութիւն էր վերցրել, ապա աւելի շուտ կը յայտնաբերուէր նրա հիւանդութիւնը եւ աւելի կարճ ժամանակամիջոցում նա կապաքինուէր: Վերջերս կատարուած ուսումնասիրութիւնների արդիւնքում պարզուել է, որ դիաբետ եւ բարձր արեան ճնշում ունեցող հիւանդներին աւելի շատ սպառնում է սրտի կաթւածը, քան երիկամների դժարութիւնները: Ովքե՛ր են աւելի շատ ենթակայ երիկամների հիւանդութեանը: Երիկամների հիւանդութիւնը սպառնում է ցանկացած մարդու, բայց կան մարդիկ, որոնք աւելի մեծ հաւակնութիւններ ունեն այդ հիւանդութեան հանդէպ: Դրանք են. Դիաբետ ունեցողները: Բարձր արեան ճնշում ունեցողները: Նրանք, ում տարիքը 65 տարեկանից բարձր է: Նրանք, որոնց ընտանիքներում սրտի կամ երիկամի նկատմամբ չափազանց շատ են զանգատները: Այն մարդիկ, որոնք բարձր կշիռ ունեն: 25 տարի առաջ ոչ որ չգիտէր խոլեստերինի վերահսկման կարեւորութիւնը, որը եւս երիկամների հիւանդութեան պատճառ հանդիսացող հիմնական ազդակներից մէկն է: Այսօր բժիշկները իրենց հիւանդներին պարտադրում են, որպէսզի վերջիններս այս բոլոր նշանները քննութիւնները անպայմանօրէն անցնեն, կամ էլ տանը անցկացնեն վերոյիշեալ բժշկական տեսող: ■

## Արեւիկ... Ճար. էջ 25-ից

Դա են վկայում նաեւ մեր հիւրերի ծափահարութիւնները: Վերջում ես խնդրում եմ բոլորին յոտնկայս լռութեամբ յարգել գիտութեան միակ գոհի՛ Գուրիչի ճամպուրկի յիշատակը: Ի միջիայրուց,- անվրդով ընդհատում է ինձ Ալիկը,- ես վաղուց ուզում էի հարցնել, թէ դա ո՞ւմ տիրագործի ճամպուրկն է դրած իմ մահճակալի մօտ: Իրար հրելով վազում ենք Ալիկի սենեակը և բոպէ անց հանդիսատար վերադառնում՝ բարձր պահած Գուրիչի ճամպուրկը: Կարող էր շատ աւելի վատ վերջանալ,- ասաց Կարէնը: Հ.Գ.Մոսկուայից զանգահարում է Գուրիչը. -ԱՄՆ-ի պրոֆեսոր Ստորբերը,- գոռում է նա,- թոյլտրութիւն է խնդրում մեր արդիւնքները իր ակնարկում գետնելու համար: Դէմ չէ՞ք: -Ի՞նչ էք կարծում,- միջամտում է Կարէնը,- ժամանակը չէ՞ խորհրդակցութիւն հրաւիրենք յաջորդ գիտարշակի վերաբերեալ: ■

Էձօ՞ն ԿՅՆՅ ՆՅՆՅ ՍԵՅՅ ՍՅՅՅ

Վարդավառը նշուց Թեհրանի հայկական թաղամասերում.-



Արդեն սովորութիւն է դարձել, որ Վարդավառի օրայ հենց վաղ առաւօտից հայկական թաղամասերում երիտասարդները եւ պատանիները իրար վրայ ջուր շաղ տալով տօնում և նշում են Վարդավառի աւանդական տօնը: Նկարում կարող տեսնել այդ խանդավառութիւնը հայկական թաղամասերում:

Նշանակում են հայ տեսուչներ հայկական դպրոցների համար.- Որոշ աղբիւրներից տեղեկանում ենք՝ երկրի կրթական խորհրդի կողմից որոշում է ընդունել, որի հիման վրայ, այսուհետ հայկական դպրոցներում պաշտօնավարելու են հայ տեսուչներ: Թէ՞ որ դպրոցում ո՞վ կը պաշտօնավարի դեռ պարզ չէ: Այս վերջին հարցը ուսումնասիրում է:

Իրանահայ ուսուցիչները չմասնակցեցին Հայաստանում կայացած ուսուցիչների վերապատրաստման ծրագրին (Ազգ. Հեռու. 17.7.00).- Դասընթացներին մասնակցելու համար Երևան էին ժամանել 15 հայ ուսուցիչներ աշխարհի տարբեր երկրներից: Մէկ ամսայ ընթացքում սփիւռքի հայկական դպրոցների նախակրթարանների մանկավարժները մասնակցեցին 12 առարկաների դասընթացներին: Ծրագիրը կազմել էր Երևանի մանկավարժական համալսարանի սփիւռքի գիտաուսումնական կենտրոնի աշխատակիցների կողմից: Դասընթացները Ֆինանսադրել է Հայաստանի Համահայկական Հիմնադրամը:

Պատգամատրական Ժողովի ընտրութիւնների հետ կապած խորհրդակցութիւն Մաջդիէ թաղամասում.- Յուլիսի 18-ին ԻԱՄՄ-ում տեղի ունեցաւ ժողովրդական հանդիպում և մտքերի փոխանակութիւն առաջիկայ Պատգամատրական Ժողովի ընտրութիւնների վերաբերեալ: Ընտրութիւնների մասին տեղեկութիւններ յաղորդեց ԿԸՅ-ի անդամների կողմից, այնուհետև ներկայներից ոմանք ելոյթ ունեցան եւ առաջարկներով հանդէս եկան: Ելոյթ ունեցողների մեծ մասը այն կարծիքին էին, որ ընտրութիւնները լաւ է լինի «Համամասնական» և «Մեծամասնական» խառը եղանակով, որտեղ կարող են լինել երկու կամ երկուսից աւել ցանկեր ու անկախ քեկնածուներ: Տոկոսային յարաբերութեամբ իւրաքանչիւր խմբի կամ անկախականների խմբի ձեռք բերած ձայների համապատասխան պատգամատրներ կարող են մտնել ՊԺ: Այդ ձևով տարբեր գաղափար ունեցող մարդիկ կամ խմբեր կարող են իրենց ներկայացուցիչներն ունենալ ՊԺ-ում: Սա նման է Հայաստանի Խորհրդարանի ընտրութիւններին:

Էձօ՞ն ԿՅՆՅ

Ահմադ Շամլուն մահացաւ.- Աւուրներից տեղեկացանք, որ երկարատեւ հիւանդութիւնից յետոյ կեանքից հեռացաւ Իրանում սիրած եւ հանրայայտ գրող, թարգմանիչ՝ Ահմադ Շամլուն:



Նրա գրչին են պատկանում «Քեթաբէ քուչէ» (փողոցի գիրքը) հսկայ աշխատութիւնը, «Հաւայէ թագէ» (թարմ օդ), «Այդա դար այեներ» (Այդան հայելու մէջ) եւ ... բանաստեղծութիւնների ժողովածուները: Ահմադ Շամլուն թարգմանել է տարբեր

գրողներից բազմաբնոյթ ստեղծագործութիւններ: Նրա թարգմանութիւնների շարքին են պատկանում «Համչոն քուչէյէ բի էնթեհայ» (ինչպէս անաւարտ փողոց)՝ Հայկոյից, «Փաբերեհեհեհա» (ոտարբիկներ)՝ Չահարեա Էստանկոյից, «Արուսիէ խուն» (Արեան պակը)՝ Ֆեդերիկո Գարսիայից եւ այլն:

Իրանի նախագահ Մոհամմադ Խաթամին 120 հազար դոլար նիւրեց «Արարատին».- Արմէնայեւ.- Ընդառաջելով Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա կաթողիկոսի փափագին,



Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ Մոհամմադ Խաթամին 120 հազար դոլար է նիւրել Թեհրանի «Արարատ» մարզկան- մշակութային միութեան «Արարատ»

Ֆուտբոլի խմբին: Նախագահը խոստացել է առաջիկայ տարիներին եւս օժանդակել միութեանը: Ինչպէս արդէն հաղորդել է, անցած շաբաթ Վեհափառ հայրապետը հանդիպում է ունեցել նախագահ Խաթամիի հետ: Հանդիպման ընթացքում Նորին Սրբութիւնը ներկայացրել է իրանահայութեան կարիքները եւ մտահոգութիւնները: Նախագահ Խաթամին խոստացել է մօտ ապագայում ընթացք տալ արած բոլոր առաջարկներին:

Բնակչութեան աճի նւազում է գրանցել Իրանում (Բահար օրաթերք 15.7.00).- Շիրազ քաղաքի առողջապահութեան կենտրոնի փոխնախագահ՝ Համեդ Ֆասիհիհիան յայտնել է, որ Իրանի բնակչութեան աճը անցեալ 10 տարիների ընթացքում 2.7 տոկոսից իջել է 1.1-ի: Նախատեսում է, որ Իրանի բնակչութիւնը 2050 թականին հասնի աւելի քան 100 միլիոն հոգու:

Ի.Ի.Հ. Նախագահ՝ Խաթամին հրաւիրել է Մոսկւա (Բահար օրաթերք 15.7.00).- Իրանի և Ռուսաստանի նախագահները փոխադարձաբար հրաւիրի հիման վրայ և հանդիպում կունենան

երկու երկրների մայրաքաղաքներից որոնե մեկում:

**Թեհրանում մեկ ամիս յետոյ սկսելու է ջրի ճգնաժամը (Իրան օրաթերթ 31.7.00).**- Իրանի էներգետիկայի նախարար՝ ճարտարագետ Հարիբոլլահ Բիթարաֆը նշել է, որ ջրի պակասի և ջրամբարներ ներմուղ ջրերի քանակի իջեցման հետևանքով հաւանական է, որ Թեհրանում կը ստեղծի ջրի ճգնաժամ: Դա հնարատը կը լինի կամիսել ջրի օգտագործման խնայողութեամբ և անձրևների առկայութեամբ:

**Մի ժաման, Հայաստան մեկնող ատոքրուսի մասին (Բահար օրաթերթ 26.7.00).**- Իրանի գրողների կենտրոնի խորհրդի անդամ Բիժան Բիջարին մտադիր է մի ժաման գրել, Իրանի գրողներին՝ Հայաստան տանող ատոքրուսի վերաբերեալ:

ԹՅ ԹՅ Է՞Ի Յ Կ՞

**ԱՄՆ**-ը Հայաստանին 300 հազար դոլար է տրամադրում (Ազգ օրաթերթ 26.7.00).- ՎՍՇԻՆԳՏՈՆ, 25 ՅՈՒԼԻՍ, ՆՈՅԵՄԵՄԵՍ ՏՄՊԱՆ: ԱՄՆ-ը Հայաստանին 300 հազար դոլար է տրամադրում «Ձանգաւածային ոչնչացման գէնքի տարածումը հակազդելու բնագաւառում համագործակցութեան մասին» պայմանագրի շրջանակներում, որն ստորագրել է յուլիսի 24-ին Վաշինգտոնում, ՀՀ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի ԱՄՆ կատարած այցի ընթացքում: Ինչպէս Ս.Սարգսեանի հետ համատեղ ճեպագրոյցում յայտարարել է ԱՄՆ պաշտպանութեան նախարար Ուլեան Քոնէրը, այդ միջոցները նպատակաւորուած են նոր սարքաւորում ձեռք բերելու, որ ներառում է միջուկային, քիմիական եւ կենսաբանական գէնքի յայտնաբերման սարքեր, եւ անճնակազմի ուսուցմանը: «Դա Հայաստանին կօգնի կատարելագործել իր մաքսային եւ սահմանապահ վերահսկողութեան ծառայութիւնները», նշել է նա: Ու. Քոնէրը նաեւ նշել է, որ վա-դորօք արդէն ԱՄՆ-ը համաձայնել է Հայաստանին օգնել դարաբաղեան հակամարտութեան արարտից յետոյ մնացած հակայետեակային ականների ոչնչացման գործում: Ըստ նրա,

համաձայնագրի ստորագրումը յաջողուած միջոցառումներով չի նախատեսուած ամերիկեան զօրքերի որեւէ մասնակցութիւն:

**Անրաժեշտ է առաւել գործնական դարձնել փոխշահաւետ ծրագրերը (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերթ 15.7.00).**- Նախագահ Ռոբերտ Քոչարեանը ընդունել է Իրանի Իսլամական Հանրա-



պետութեան արտաքին գործերի նախարարի տեղակալ Մոհամմադ Հոսէյն Աղեյի գլխաւորած պատուիրակութեանը, որը Երեւանում է Հայաստան- Իրան- Եւրոմիութեան եռակողմ խորհրդատական հանդիպման շրջանակներում: Իրանի արտաքին քաղաքական գերատեսչութեան բարձաստիճան ներկայացուցիչն ընդգծել է, որ իր երկիրը յատուկ կարեւորութիւն է տալիս Հայաստանի հետ քաղաքական, տնտեսական եւ մշակութային յարաբերութիւնների զարգացմանը: Խօսելով երկկողմ համագործակցութեան հեռանկարների վերաբերեալ, կողմերը շեշտել են փոխշահաւետ ծրագրերն առաւել գործնական դարձնելու անհրաժեշտութիւնը:

Իրան- Հայաստան տրանսպորտային համագործակցութիւնը համարելով երկկողմ կապերի առանցքային ուղղութիւններից մեկը, Մոհամմադ Հոսէյն Աղեյը նշել է, որ իրանական կողմը կարեւորում է Հայաստանով տարանցիկ բեռնափոխադրումների հեռանկարը: Ջրուցակիցներն անդրադարձել են նաեւ Իրան- Հայաստան զազամուղի կառուցմանը:

**Իրանը ջերմութեամբ է արձագանքում Մեղրիում իրականացւող ծրագրերին.**- Իրանի արտգործնախարարի տեղակալ Մոհամմադ Հոսէյն Աղեյին է նրա գլխաւորած պատուիրակութեանն ընդունել է վարչապետ Անդրանիկ Սարգսեանը:

Ուշագրաւ է իրանցի բարձրաստիճան դիւանագէտի ջերմ հաւանութիւնը, որ նա արտայայտել է Մեղրու տարածաշրջանում Հայաստանի կառավարութեան ձեռնարկած միջոցառումների կապակցութեամբ: Պրն. Աղեյի հաւաստմամբ՝ իրականացւող ընդարձակ ծրագիրը հետաքրքրութեամբ է ընդունել Իրանում, արձագանքները շատ են յատկապէս Իրանի գործարար շրջանակներում: Արդէն իսկ չի բացառուած իրանցի ներդրողների մասնակցութիւնը Մեղրիում իրականացւող ճանապարհների շինարարութեանը, ենթակառուցածքների բարելաւմանն ու զբոսաշրջիկութեանն առնչւող միջոցառումներին:

Իրան-Հայաստան զազամուղի դերը եւս կարեւորել է սոյն հանդիպման ընթացքում: Իրանի փոխարտգործնախարարը նշել է, որ իրանական հատաւածի շինարարութեան համար պահանջւող միջոցներն արդէն հայքայած են: Վարչապետ Ա.Սարգսեանն իր հերթին հեռանդկարային է համարել Իրան- Հայաստան մաթամուղի եւ Մեղրիում մաթավերամշակման գործարանի



կառուցման հնարաւորութիւնը: Նմանապէս, Պրն. Մոհամմադ Հոսէյն Աղեյին հանդիպել է արտգործնախարար Վարդան Օսկանեանի հետ եւ քննարկել Հայաստան-Իրան յարաբերութիւնների զարգացման հեռանկարները:

**Նորք-Մարաշը՝ օրինակելի բժշկական կենտրոն (Ժամանակ օրաթերթ 23.6.00).**- Սա մեծ պարծանք է Հայաստանի համար: Ժամանակակից տեխնիկայ և սարքաւորումներ, անսխալ արտադրում, սրտի ամենաբարդ վիրահատութիւններ և բուժումներ: Չկայ որեւէ կաշառակերութիւն: Կենտրոնի տնօրէնն է Լիդա Մուրադեանը, այդտեղ է աշ-

խատում յայտնի սփիւքահայ վիրաբոյժ Հրայր Հովակիմեանը: Այդտեղ են բերում արտասահմանից եւ Ադրբեջանից մեծ թով հիւանդներ վիրահատութեան համար:

**Խորհրդածողով սփիւքի 100 ներկայացուցիչների մասնակցութեամբ** (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերք 15.6.00).- 2000 թականի յունիսի 9-12-ը Բուրայեստում տեղի ունեցաւ Եւրոպայի հայ միութիւնների Ֆորումի 2-րդ խորհրդածողովը, որին իրենց մասնակցութիւնն էին բերել Եւրոպայի 18 երկրների շուրջ 100 ներկայացուցիչներ եւ հիւրեր այլ տարածաշրջաններից:

**Պաշտօնանկ արեց ՀՅԴ-ի «Երկիր» օրաթերքի գլխատըր խմբագիր՝ Շաղիկ Մարութանեանը** (Առաւօտ օրաթերք 21.6.00).- Մոյն խնդրի պատճառների վերաբերեալ «Առաւօտի» հարցին ի պատասխան, ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամ Գեղամ Մանուկեանն ասաց, - Կանոնագրի համաձայն՝ ԳՄ-ն է ազատում և նշանակում իր պաշտօնաթերքի խմբագրին, և իրենք օգտուել են այդ իրաւասութիւնից. որւէ այլ մեկնաբանութիւն չի լինի»: Առայժմ թերթը ստորագրելու է «Երկիր» օրաթերքի պատասխանատու - քարտուղար Համլետ Դաթեանը:

**Նոր կուսակցութիւններ Հայաստանում** (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերք 28.6.00).- ՀՀ արդարադատութեան նախարարի 2000 թականի յունիսի 12-ի թիւ 790 հրամանով գրանցուել է Ազգային ասանդապահ արարչական կուսակցութիւնը, իսկ յունիսի 15-ի թիւ 803 հրամանով՝ «Միատրւած հայեր» կուսակցութիւնը:

**Սոհրաբ Մեփեհրիի գիրքը հայերէնով** (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերք 28.6.00).- «Նոր դար» հրատարակչութիւնը առաջին անգամ հայերէնով ընթերցողի սեղանին դրեց Սոհրաբ Մեփեհրիի բանաստեղծութիւնների ժողովածուն: Սոհրաբ Մեփեհրիին համարում են պարսկական ժամանակակից պոէզիայի ամենաիմքնատիպ բանաստեղծը, որի պոէզիան ու գեղանկար-

չութիւնը մուտք է գործել համաշխարհային արեստի ասպարէզ: Նրա ստեղծագործութիւնները թարգմանուել են գերմաներէն, իսպաներէն, անգլերէն, արաբերէն, Ֆրանսերէն, լեհերէն, թուրքերէն...եւ վերջապէս հայերէն լեզուներով:

**Մեղրիում նաթավերամշակման գործարանի կառուցման հնարատրութիւնը** (Ազգ. Հեռու. 14.7.00).- ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարեանը Իրանի արագործ փոխնախարարի հետ հանդիպելիս ասել է, որ չի բացառում, որ մի շարք նախաձեռնութիւնների, մասնատրապէս ճանապարհների, ենթակառուցւածքների բարելաման, զբոսաշրջիկութեան ոլորտներում մասնակցեն Իրանցի ներդրողներ: Նա իրանական կողմին առաջարկել է ներդրումներ կատարել Հայաստանի այն ձեռնարկութիւններում, որտեղ բնական գազը օգտագործւում է որպէս հումք: Վարչապետը հեռանկարաւոր է համարում Իրան-Հայաստան նաթամուղի և Մեղրիում նաթավերամշակման գործարանի կառուցման հնարատրութիւնը: Իրանի արագործ փոխնախարար Մոհամմադ Հուսէյն Ադեբը հուսատիացնում է, որ առաջարկները մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում ևս Իրանի համար և այդ ուղղութեամբ աշխատանքներ կը տարի:

ՅԷԷ<sup>2</sup> 1/4 1<sup>2</sup> ՄԷՄ

**ՔԱՋ ՆԱԶԱՐԸ՝ 30 ՏԱՐԵԿԱՐ** (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերք 14.7.00).- Սփիւքի միակ երգիծաբնադատական ամսագիր՝ «Քաջ Նազարը», այս տարի 30 տարեկան է: Սիրելի ամսագրի տարեդարձը սփիւքահայերը պատրաստում են տօնել ոչ միայն Լոս Անջելեսում, այլեւ Նիւ Եօքքում, Բոստոնում, Մեյ ֆրանսիսկոյում, Թեքսասում, Քէլթոնում: ՀՀ մշակոյթի, երիտասարդութեան հարցերի եւ սպորտի նախարարութեան, Պարոնեանի անւան թատրոնի եւ «Ոգնի» երգիծաթերքի հովանաւորութեամբ Երեւանում էլ յուլիսի 16-ին ծիծաղի վարպետների մասնակցութեամբ նշուեց յոբելեանական տարեդարձը: Ամսագիրը հիմնել է ներկայիս գլխատըր խմբագիրը՝ Յովհաննէս

Բալայեանը: Տարիներ առաջ հասկանալով, որ ամերիկահայութիւնը կարիք ունի մի երգիծաթերքի, քանզի ամերիկահայ կեանքում բազում քաջնազարներ կան, պարոն Բալայեանը լոյս ընծայեց չորս էջանոց երգիծաթերք՝ «Մեր «Ոգնի» պէս»: Այսօր ամսագիրը տպագրւում է 80 էջով՝ 8 հազար օրինակ եւ պահանջում է առնուազն 8-10



հազար դոլարի ծախս, որը ձեռք է բերում նւիրատութիւններով: Խըմբագրական աշխատակազմը փոքր է. խմբագիրն էլ, հրատարակիչն էլ, գումար հայթայթողն էլ պարոն Բալայեանն է, իսկ նրա «աջբեր» մեծ եղբայրը՝ Ներսէսը: Ունեն երգիծագիր՝ Արշակ Խնդիրեան, որ խմբագրի խօսքերով՝ երկրորդ Յակոբ Պարոնեանն է. խնդիր չունի ոչ ոքի հետ, բայց հրաշալի քննադատող է, ֆրանսիայից ամսագրին թրթակցում է դերասանուհի Անահիտ Թովիչեանը: Կարճառոտ պատմելով ամսագրի մասին՝ լրագրողների հետ հանդիպման աւարտին պարոն Բալայեանը փորձեց համոզել մեզ, որ աշխարհում «միակ ապրելու տեղը» Հայաստանն է՝ գեղեցիկ, ջրնաղ, հոյակապ հրաշքների աշխարհը, իսկ մենք հերոսներ ենք՝ երկաթական ու հօքօր:

**Մահացաւ ամերիկահայ նշանաւոր կոմպոզիտոր Ալան Յովհաննէսը** (Ազգ օրաթերք 29.6.00) Յունիսի 21-ին Միաթելում (Մ. Նահանգներ), 89 տարեկանում մահացել է ամերիկահայ նշանաւոր կոմպոզիտոր Ալան Յովհաննէսը: Ծնած 1911 թ. Մասաչուսէթի նահանգի Սոմերսիլ քաղաքում, բուն անունով Ալան Յարութիւնի Չաքմաքչեանը սովորել է Բոստոնի երաժշտանոցում: 1933 թ. նրա առաջին սիմֆոնիան ստացել է Մ. Էնդիկտոնի անւան մրցանակը, որից յետոյ լայն քայլել են երաժշտական լաւբանները նրա ստեղծա-



գործութիւնների առջեւ, որոնք հետըզհետէ ձեռք են բերել Ճայրագոյն Արեւելքի երկրների ժողովուրդների երաժշտութեան մեղեդայնութիւնն ու ռիթմերը: Նրա ձայնադարանը հաշուում է աւելի քան 500 ստեղծագործութիւն՝ սիմֆոնիա, օպերա, կամերային՝ ոկլա եւ գործիքային երկեր, որոնցում յաճախ են օգտագործում հնդկական, ճապոնական եւ հայկական նուագարաններ: Հայկական ըստեղծագործութիւններից ծանօթ են «Մուրբ Վարդան» սիմֆոնիան, «Անահիտ» Ֆանտազիան, «Ախթամար», «Լուսածագ», «Վարագ», «Արեւազար», «Արթիկ», «Թալին» կոնցերտները:

Ամերիկայի մի շարք թերթեր լայն անդրադարձներ են հրատարակել մեծ երաժշտի մահուան կապակցութեամբ:

**Սկսել են «Տիտանիկ» գանձերի որոնումները** (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերթ 25.7.00).- Սկսել է 1912 թականին խորտակ-



ած «Տիտանիկ» մարը ներթափանցելու՝ պատմութեան մէջ առաջին գործողութիւնը: Ինչպէս հաղորդել է BBC-ին, չնայած առասպելական մառի ողջ մնացած ուղեւորների բողոքին, որոնք պահանջում են հանգիստ թողնել «Տիտանիկ», ջրատոյգները կիցնեն Ատլանտեան ովկիանոսի յատակը եւ 4 կմ խորութեան վրայ կը փորձեն յետագօտել մառի մնացորդները: Նրանք կը կառավարեն այն նոյն սուզանատերը, որոնք օգտագործել են «Տիտանիկ» Ֆիլմի նկարահանումների ժամանակ: Նըրանք կօգտագործեն մառի յատուկ սարք՝ մառի պահասներակները ներթափանցելու համար: Ջրատոյգները յոյս ունեն գտնել ուղեւորներին պատկանող թանկարժէք իրեր, ինչպէս մառի նախ գրանցումների մատեանը, որում կարող են տեղեկութիւններ լինել մառարկութեան վերջին բուպէների մասին:

**Միսիթարեան միաբանութեան երկու ճիւղատրումները միաւորել են** (Ազգ օրաթերթ 25.7.00).- ԵՐԵՒԱՆ, 24 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅԵՄՆ ՏԱՊՄԱՆ: Միսիթարեան միաբանութիւնը, Վենետիկ եւ Վիեննայի պատմական գոյգ ճիւղատրումներով, երկարամեայ բանակցութիւններից եւ քննարկումներից յետոյ Վենետիկ Սք. Ղազար Մայրավանդում յուլիսի 10-21-ը կազմակերպել է միացեալ ընդհանուր արտակարգ ժողով, որին մասնակցում էին երկու հաստատութիւնների բոլոր միաբանները: Ինչպէս յայտնում են Միսիթարեան միաբանութեան դիւանից (Վենետիկ-Սք. Ղազար), ժողովին միաբան վարդապետները միասնաբար որոշել են միաւորել՝ ստեղծելով մէկ կենտրոնական վարչութիւն ունեցող Միսիթարեան միացեալ միաբանութիւն:

Այս պատմական քայլը զուգահեռում է Միսիթար վարդապետ Մեքատացու կողմից հիմնած Միաբանութեան 300 ամեակին, Քրիստոնէութեան 2000 ամեայ յորելեանին, ինչպէս մառի Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հրշակման 1700- ամեակին:

**ԱՄՆ վարչակազմը ջանում է ճախողել հայկական լոբբիի ջանքերը** (Ազգ օրաթերթ 20.7.00).- ԱՆԿԱՐԱ, 19 ՅՈՒՆԻՍ, ՆՈՅԵՄՆ ՏԱՊՄԱՆ: «Հիւրիէթ»-ը տեղեկացնում է, որ ԱՄՆ վարչակազմը ջանում է ճախողել Թուրքիային 4 մլդ դոլար արժողութեամբ գրոհային ուղղաթիռներով համարելու մախագիծը չեղեալ յայտարարելու ուղղութեամբ տարւող հայկական լոբբիի ջանքերը: Նախագահ Բիլլինթոնը մասնակ է յղել հայկական դիրքորոշումը պաշտպանող սենատորներին, իսկ թուրքամէտ կողմնորոշում ունեցող 38 սենատորներ իրենց այս հարցով մամակով դիմել են ԱՄՆ պետքարտուղար Օրլբայթին: Սենատորների ուղերձում մասնատրապէս կոչ է արւում չխանգարել գրոհային ուղղաթիռների գործարքին: Ուղերձը ստորագրել է արտաքին յարաբերութիւնների կոմիտէի մախագահ Ջէսի Հէլմսը, յետախուզութեան կոմիտէի մախագահ Ռիչարդ Շերին, արդարադատութեան կոմիտէի մախագահ Օրին Հէլը, սենատորներ Ջոն Ուորները, Բոբ Քերին, Ֆրեդ Թոմսոնը եւ

ուրիշներ: Ուղերձում նշում է, թէ Թուրքիան, իբր, ընթանում է ժողովրդավարացման ճանապարհով, ինչում, իբր, իր ներդրումն ունի նորընտիր մախագահ Մեզերը:

**ԱՄՆ-ը խօսում, իսկ Եւրոպայան աշխատում է** (Բահար օրաթերթ 15.7.00).- ՄԱԿ-ի ապահովութեան խորհրդում Ֆրանսիայի ներկայացուցիչ «Ման Դեիդ Լուիտը» մամուլի ասուլիսի ժամանակ յայտնել է, որ միջազգային ասպարեզում ԱՄՆ-ը 15 երկրների չափ շատախօսութիւն է անում, մինչդեռ Եւրոխորհրդի 15 երկրները աշխատում են որպէս մի երկիր: Աշխարհի մաքուր արտադրութեան 30 տոկոսը պատկանում է Եւրոխորհրդին, մինչդեռ ԱՄՆ-ի արտադրութիւնը 25 տոկոս է կազմում: ՄԱԿ-ի բիւրօյէի 36 տոկոսը Եւրոպական երկրներն են ապահովում, այդ իսկ պատճառով այդ համակարգում ղեկավար կողմը նրանք են:

**Բարուն պաշտպանում է տերրիզմը** (Բահար օրաթերթ 15.7.00).- ԱՄՆ-ի արտգործնախարարութեան զեկոյցից տեղեկանում ենք վերոյիշեալ լուրի մասին: Իսկ Ադրբեջանի որոշ կուսակցութիւններ հերքում են այդ տեսակէտը:

**Մոսկւան չընդունեց ԱՄՆ-ի 100 միլիոն դոլարի կաշառքը՝ Իրանի հետ չհամագործակցելու նպատակով տրամադրած գումարը** (Բահար օրաթերթ 30.7.00).- Այս մասին գրում է Վաշինգտոնում լոյս տեսնող «Նոկլոնիքս» շաբաթաթերթը: Այս գումարի մուծումով, ԱՄՆ-ը Մոսկւայից պահանջում էր, որ նրանք իրենց միջուկային համագործակցութիւնը Իրանի հետ դադարեցնեն: Մակայն Մոսկւան չի համաձայնել:

**ՄԱԿ-ի փորձագէտների առաջարկը** (Հայաստանի Հանրապետութիւն օրաթերթ 22.6.00).- ՄԱԿ-ի անկախ փորձագէտների խումբն առաջարկել է ստեղծել յա-տուկ հիմնադրամ՝ ապահովելու երկ-րագոյի բնակչութեան մեծամասնութեան մուտքն ինտերնետ ցանց: Այդ հիմնադրամի չափը, վերլուծաբանների կարծիքով, պէտք է լինի 500 մլն ամերիկեան դոլար: Ներկայումս ՄԱԿ-ի ներկայացուցիչների գնահատումներով, ինտերնետից կարող են օգտուել երկրի բնակչութեան 5 տոկոսը: ■

**30ԴԻԱԾ 52**

Ազգային դպրոցներում գանձուած գումարները, եւ այլ ձեռնարկներից գոյացած բոլոր եկամուտները կենտրոնանում են Կրթական Խորհրդի մօտ, որտեղից կատարում է համապատասխան յատկացումները եւ վճարումները: Ուսումնական տարեվերջին եթէ յիշեալ խորհրդի հաշիին կան յաւելեալ գումարներ՝ նոյնօթեամբ փոխանցում են Թեմական Խորհրդին:

Վերոյիշեալ պայմանից բացառում են այն գումարները, որոնք նրկիրատուի կամ կտակարարի կողմից նախապէս ճշտորոշում է, յատկացելու մի դպրոցի կամ որոշ նպատակի համար, նկատի ունենալով Թեմական Խորհրդի թեկադրանքները:

**30ԴԻԱԾ 53**

Կրթական Խորհուրդը լուրջ աշխատանք է տանում կրթական նախարարութեան պայմանները լրացնող հայ տեսուչներ եւ վերակացուներ գտնել, այն դպրոցների համար, որ կարիք ունեն, ինչպէս նաեւ հայերէնագիտական առարկաների դասատուներ, եւ ուղղակի կամ համապատասխան ծնողա-ուսուցչական շրջանի կրթական վերատեսչին:

**30ԴԻԱԾ 54**

Ազգային դպրոցների բոլոր ծրնողա-ուսուցչական կազմերը պարտաւոր են գործադրութեան դնել Կրթական Խորհրդի ցուցմունքներն ու հրահանգները՝ կրօնական եւ կրթադաստիարակչական հարցերում:

Կրթական Խորհուրդը՝ իր անդամների կամ ներկայացուցչի միջոցով, հետեւում է ծնողա-ուսուցչական խորհրդի ընտրութիւններին:

**30ԴԻԱԾ 55**

Կրթական Խորհուրդը ամեն տարեվերջին իր միամեայ գործունեութեան զեկոյցը ներկայացնում է Թեմական Խորհրդին:

**9. ԾՆԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ**

**30ԴԻԱԾ 56**

Թեհրանի թեմի Հայաստանեաց Առաքելական Սուրբ Եկեղեցու, Առաջնորդարանի եւ համայնքի կրօնական, կրթական եւ ազգային կարիքները հոգալու համար, իրաքանչիւր եկամուտ ունեցող անհատ պարտ է վճարելու ծխական պարտադիր տուրք՝ իր նիւթական կարողութեան սահմաններում:

**30ԴԻԱԾ 57**

Վարելու համար ծխական տուրքի գանձման աշխատանքները, Թեմական Խորհուրդը, սոյն կանոնադրութեան յօդուած 42-ի տրամադրութեան համաձայն, կեանքի է կոչում Ծխական Տուրքի Կենտրոնական Մարմին՝ բաղկացած 5-9 անդամներից, երկու տարւայ ժամանակաշրջանով:

**30ԴԻԱԾ 58**

ա- Ծխական Տուրքի Կենտրոնական Մարմինը, Թեմական Խորհրդի ներկայացուցչի հրատրով, գումարում է իր առաջին նիստը, ուր ընտրում է իր ղեկաւոր հետեւեալ կարգով՝ մի ատենապետ, մի ատենադպիր եւ մի գանձապահ:

բ- Ծխական Տուրքի Կենտրոնական Մարմինը ունենում է նաեւ գրասենեակային պաշտօնեայ եւ գանձիչներ:

**30ԴԻԱԾ 59**

Ծխական Տուրքի Կենտրոնական Մարմնի պարտականութիւններն ու իրաւասութիւններն են՝

ա- Կազմակերպել ծխական տուրքի գանձման աշխատանքները եւ հսկել այդ աշխատանքների վրայ:

բ- Կապ պահել Ծխական Տուրքի Թաղային Մարմինների հետ, եւ իր խորհուրդներով ու ցուցմունքներով միաձեւութիւն մտցնել աշխատանք-

ների մէջ, դիւրացնելու համար գանձումները:

գ- Ամէն տարեկարգին Ծխական Տուրքի Թաղային Մարմիններին տրամադրել ժապաւիմեալ մատեաններ գանձումների արձանագրութեան համար, ինչպէս նաեւ յատուկ քարթեր եւ համարակալած անդորրագրեր:

դ- Հսկել եւ ստուգման ենթարկել, Ծխական Տուրքի Թաղային Մարմինների կողմից կատարուած անսական վճարումների հաշիւեցոյցներն ու հաշիւեկշիւները:

ե- Տուցակագրել ծխական տուրք չվճարող ազգայիններին ու յանձնել Թեմական Խորհրդին, որպէսզի Պատգամաւորական Ժողովի ուշադրութեան յանձնի համապատասխան որոշում կայացնելու համար:

**30ԴԻԱԾ 60**

Ծխական Տուրքի Կենտրոնական Մարմինը ամեն տարեվերջին իր եւ Ծխական Տուրքի Թաղային Մարմինների կատարած աշխատանքների զեկոյցը, ինչպէս նաեւ պատկան տարեշրջանի հաշիւեկշիւը, ներկայացնում է Թեմական Խորհրդին: ■

**ԾՈՐ ԾՈՐԻ ՎԱՆՔ**

Վանքը հիմնադրել է 13-րդ դ., Արտագի եպիսկոպոս Ջաքարիան, որը Յով. Ծործորեցու հետ այստեղ բացել է բարձրագոյն դպրոց եւ գիտամանկավարժական գործունեութիւն ծաւալել: Վանքը լինելով Արտագի հայկական իշխանութեան մշակութային կենտրոն, վերելք է ապրել 14-րդ դ. առաջին կեսին, երբ այստեղ կատարել են գրականութեան զանազան աշխատանքներ. Ծործորի վանքի Ս. Աստուածածին եկեղեցին (1298-1314) խաչածե գմբէթաւոր յօրինածք է: Կառուուած է սրբատաշ քարով, միակ՝ արմ. շքամուտքը ձեւաւորած է սլաքածե կրկնակի դեկորատիւ կամարներով: Ջրամբարի կառուցման պատճառով (ճարտ. Վ.Առաքելեանի զիխատութեամբ 1988-2000թ.) տեղափոխուել է բարձրադիր վայր:

## Հասարակական

### ՄՏԱՅԻԱԾ ԳՐՈՒԹԻՒՆ ԾՉ 0àð, ² ¶ ðàôÃÆôÛ

Այսու մեր սիրելի համայնքին տեղեկացնում ենք, որ չորեքշաբթի 2000 քուակահի յուլիս 20-ի երեկոյեան, 12-րդ Պատգամատրական ժողովի ընտրական կենտրոնական յանձնախմբի հրավերով տեղի ունեցաւ Թեհրանի հայոց թեմի Պատգամատրական ժողովի յառաջիկայ ընտրութիւնների ընտրատարածքների ենթայանձնախմբերի անդամների հետ հանդիպում:

12-րդ Պատգամատրական ժողովի ընտրական կենտրոնական յանձնախումբը թեմիս կանոնադրութեան յօդաժմների շրջագծում, կեանքի է կոչել Թեհրանահայութեան հինգ թաղամասերի ընտրական ենթայանձնախմբեր՝ որոնց կենտրոնը նշանակել է հետեւեալ եկեղեցիներում.

#### Ա- Սարգիս Եկեղեցու շրջան

1. Պրն. Էդիկ Հովեան
2. Պրն. Ռամոն Յովսէփեան
3. Պրն. Մարգիս Յարութիւնեան
4. Տիկ. Արմինէ Գրիգորեան
5. Պրն. Էդմոնդ Աբելի
6. Պրն. Նորիկ Դարբեան
7. Պրն. Սերոժ Համբարձումեան
8. Տիկ. Յասմիկ Դարբեան
9. Պրն. Ռաֆֆիկ Պողոսեան

#### Բ- Ստուածածին Եկեղեցու շրջան

1. Տիկ. Էլմա Օհանջանեան
2. Պրն. Յովիկ Օհանջանեան
3. Պրն. Ներսիկ Ալլահվերդեան
4. Տիկ. Էմմա Տէր Աբրահամեան
5. Պրն. Հմայեակ Խաչիկեան
6. Պրն. Վահէ Մանսուրեան

#### Գ- Արիգոր Լուսաւորիչ Եկեղեցու շրջան

1. Պրն. Թաթուլ Եղգարեան
2. Պրն. Մես Մեհրաբեան
3. Պրն. Սերժիկ Սիմէոնեան
4. Պրն. Յարութիւն Յարութիւնեան
5. Տիկ. Մարօ Այազեան
6. Պրն. Վահէ Նազարբեգեան

#### Դ- Վարդանանց Եկեղեցու շրջան

1. Պրն. Էդիկ Աբնուի
2. Պրն. Վարուժ Աբուլեան
3. Պրն. Ռազմիկ Այդինեան
4. Պրն. Ժոռէս Գրիգորեան
5. Պրն. Սերժիկ Ստեփանեան
6. Պրն. Մարօ Դիլանեան

#### Ե- Ս. Թարգմանչաց Եկեղեցու շրջան

1. Պրն. Ազատ Յակոբեան
2. Պրն. Վիգէն Խանբաբայեան
3. Տիկ. Մուսաննա Համբարչեան
4. Պրն. Խեչում Խեչումեան
5. Տիկ. Աննիկ Շահմուրադեան
6. Պրն. Անդրանիկ Մուրադեան
7. Պրն. Չարեհ Մարտիկեան
8. Պրն. Շահէն Բաղդամեան

Հանդիպման ընթացքում նախ կենտրոնական յանձնախմբի ատենապետ՝ Պրն. Թովմաս Թովմասեանը մանրամասնօրէն անդրադարձաւ ընտրական կենտրոնական յանձնախմբի գործունէութեանը եւ այդ ծիրում տարած նախապատրաստական աշխատանքներին, ապա ներկաներին բացատրեց ընտրատարածքների ենթայանձնախմբերի գործունէութեան պարտականութիւնները: Նա ընդգծեց թէ մեծ պարտականութիւն է ծանր աշխատանք է յանձնարարած ենթայանձնախմբերի կազմերին, որոնց բժախնդիր եւ հետետողական ջանքերով՝ յոյս ունենք կարողանանք լաւագոյն ընտրութիւնները կայացնել մեր թեմում: Անշուշտ ենթայանձնախմբերը կենդանի կապն են լինելու ժողովրդի եւ կենտրոնական յանձնախմբի միջեւ ու թաղամասերի բոլոր մարմիններից, միութիւններից ու եկեղեցական խորհուրդներից ակնկալում է իրենց համագործակցութիւնը ենթայանձնախմբերի հետ, որպէսզի թէ՛ քարոզչական եւ թէ՛ ընտրութեան գործերը սահուն ընթանայ եւ մեր ժողովուրդը մեծ թով մասնակցութիւն ունենայ յառաջիկայ ընտրութիւններին:

#### ՅԱՐԳԱՆՕՔ՝

Թ.Շ.Թ. 12րդ ՊԱՏԳԱՄԱՏՐԱԿԱՆ ԺՊՈՂՎԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՄԲ

ԱՏԵՆԱՊԵՏ՝  
Թ.ԹՈՎՄԱՍԵԱՆՑ

ԱՏԵՆԱՊՊԻՐ՝  
Ս.ՄԱՏԹԵՈՍԵԱՆ



**ՈՍԿԷ  
ՕՂԱԿՆԵՐ**

**ԼՈՅՍ** երկշաբաթաթերթը ջերմօրէն շնորհակարարում է նոր ամուսնացած սիրելի զոյգերին:

Անի Սիմոնեան - Անդրէ Սիմասեան  
Արմինէ Տ. Յովհաննիսեան - Խեչօ Խաչատրեան  
Արսինէ Աբուլեան - Դամէտ Տ. Գալստանեան  
Էլիզա Խանճեան - Դարմիկ Թահմասեան  
ժաքլին Դայրապետեան - Սերժիկ Աբրահամեան  
Լալա Աբղալեան - Շանթ Սարգսեան  
Մելինա Փիրջանեան - Ֆրէդ Յարութիւնեան  
Վերոնիկ Քէշիշեան - Ռոբերտ Բանդարեան



# ՆՇՄԱՐՆԵՐ



Ալբերտ Բեռնարդի

## Հոգեկան հիւանդների համայնք

Մեր ազգային 2 կարեւոր իշխանութիւնների՝ Օրէնս-դիր Մարմնի (Պատգամատրական Ժողով) և Գործա-դիր Մարմնի (Թեմական Խորհուրդ) ատենապետները, մեր հասկացողութեամբ նախագահները, յարգարժան հոգեբաններ են:

Ակամայից հարց է ծագում թէ Թեմական Հայոց Թեմը հոգեկան հիւանդների՞ համայնք է:

## Հոգեւորականների աջհամբոյրը

Թէեւ հոգեւորականների աջհամբոյրը ասանդական սովորութիւն է, սակայն ասանդութիւններն էլ բարեփոխում են եւ կամ այլեւս դադարում գոյութիւն ունենալուց:

Արդե՞օք գեղեցիկ երևոյթ է, որ հաւատացեալները, մանաւանդ յարգելի կանայք համբոյրում են հոգեւորականի աջը, երբ նկատել ենք որ հոգեւորականներից ոմանք համբոյրելու համար պահանջատիրոջ նման աջը պարզում են հաւատացեալներին:

Որքան գիտենք, այժմ մի քանի եւրոպական երկրներում վաղեմի սովորութիւն է մնացել, որ այրերը համբոյրում են կականց ձեռքը որպէս յարգանքի արտայայտութիւն:

Արդեօք հոգեւորականը տարբերութիւն ունի՞ սովորական անհատից:

Թերեւս բժիշկները հաստատ են, որ առողջապահական տեսակետից էլ այդ արարքը ճիշտ չի համարում:

## Ընտրութիւնն է՞նչ նշանակում

«Ընտրութիւն» բառը հայերէն եւ բոլոր լեզուներում նշանակում է ճշտորոշել, առանձնացնել մէկը՝ 2 կամ անելի նիւթերից եւ առարկաներից:

Մեր թեմի Պատգամատրական Ժողովի «ընտրութեան» համար թեկնածուների քանի՞ ցուցակներ կան:

## Ժառանգական վկայականներ

Անշուշտ ձեզ ծանօթ է, որ երբ դիմում է յանձնում պետական դատաստանին ժառանգական վկայական ստանալու մի հայ վախճանաւած անհատի վերաբերեալ, որը պատկանում էր Հայաստանեաց Ս. եկեղեցուն՝ դատարանը անծանօթ լինելով մեր անձնական իրաւունքի կանոններին պահանջում է, որ մեր Ազգային Առաջնորդարանից վկայական ստացւի տեսալ վախճան-

նալի ժառանգութեան հասանելիք բաժինների մասին, իրանահայ գաղութի անձնական իրաւունքի կանոնների համաձայն:

Սակայն, երբ դիմում էք կատարում Ազգային Առաջնորդարանին եւ օրէնքի տրամադրութիւնն էք հարցնում պատկան պարագայի վերաբերեալ, ինչպէս օրինակ հարցնում էք, թէ երբ վախճանեալը թողել է կնոջը եւ 2 տղայ եւ մի աղջիկ զաւակներին, ինչպէ՞ս է ժառանգութիւնը բաժանում նրանց մեջ՝ պահանջում է յայտնել վախճանեալի կնոջ եւ զաւակների անունները, նրանց ինքնութեան թղթի լուսապատճէմները, վկաների վկայագիրը եւ այլն, որոնք ըստ օրէնքի ներկայացուել են կամ պիտի ներկայացուեն պետական դատարանին:

Արդեօք արգելա՞ծ է հետաքրքրուել մեր անձնական իրաւունքի որեւէ կէտի վերաբերեալ, ինչպէս օրինակ ժառանգութեան կամ կտակի մասին, առանց մատնանրջելու խնդրոյ առարկայ անհատների անունները: Միթէ օրէնքը ընդհանրական բնոյթ չի՞ կրում:

Միթէ Ազգային Առաջնորդարանը փոխարինում է՞ պետական դատարանին:

Ապա ինչո՞ւ խոշոր վճարման հետ պիտի պայմանա-տրուի օրէնքի մի կէտի վերաբերեալ տեղեկանքը, որի վճարումը կարող է ոմանց համար դժար լինել:

Ինչո՞ւ մեր համայնքի տրամադրութեան տակ չի դրուում մեր անձնական իրաւունքի կանոնագիրը եւ միայն մի օրինակ պահում է Ազգային Առաջնորդարանում: ■

### ՈՒՂՂՈՒՄ

«Լոյսի» 9-րդ համարում տեղի էին ունեցել տպագրական վրիպումներ, որոնց ուղղում ենք հետևեալ կերպով.

Էջ 11, 2-րդ սիւնակի առաջին տողում այսպէս պիտի կարդալ .«27թեր, 5 դէմ, 1 ձեռնպահ»: Էջ12, 2-րդ սիւնակ , ներքեկից 14-րդ տողում՝ «մեր»-ը պիտի

## Տիրուեի

Լոյս երկշաբաթաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներքոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սզակիրներին:

- Աստղիկ Բաբայեան (Դաւթեան)
- Վարդանուշ Մելիք Յակոբեան
- Երանուհի Վարդինի (Գալստեան)
- Էմմա Դուկասեան  
(Ստեփանոս Ղազարեան)
- Վահրամ Գրիգորեան
- Դերիկ Աբրահամեան
- Սիմոն Էլիասեան
- Շահէն Մելիք. Ղարաբեօգեան
- Արփենիկ Մարտիրոսեան  
(Խանբաբեան)
- Սեդա Վուվունիկեան

# Հասարակական

## Համամասնական, թե՛ մեծամասնական

### ԿԸՅ-ի մամուլի երկրորդ ասուլիսը

Ռ. Կորիւն  
Ռ. Սարգսեան

Չորեքշաբթի 2000 թականի յուլիսի 2-ին, ազգային առաջնորդարանում տեղի ունեցաւ Կենտրոնական Ընտրական Ցանձնախմբի երկրորդ ասուլիսը իրանահայ մամուլի հետ: Սկզբում յանձնախմբի ատենապետ պրն. Թովիկ Սարուխանեանը տեղեկութիւններ փոխանցեց տարած աշխատանքների մասին: Նա նշեց, որ կեանքի են կոչել թաղային ենթայանձնախմբերը, որոնք կատարել են իրենց դիւանի ընտրութիւնները: Ենթայանձնախմբերի կենտրոնն ու աշխատավայրը լինելու է եկեղեցական խորհուրդների կողմից տրամադրուած գրասենեակները:

Հանդիպման երկրորդ մասում ԿՅ-ը պատասխանեց արծարծուած հարցերին: Ստորեւ ներկայացնում ենք կարեւորագոյն բաժինները, այն յոյսով, որ օգտակար կը հանդիսանայ մեր համայնքին:

#### Լոյս երկշաբաթերթ.-

Համայնքի լայն խաւերը այն կարծիքի են, որ ներկայ պայմաններում անհրաժեշտութիւնից ելնելով լաւ կը լինէր կիրառել համամասնական ընտրատեղանակը, որովհետև այսպիսով բոլոր միութիւնները, տարբեր գաղափար ունեցող մարդիկ կամ խմբերը կարող են իրենց ներկայացուցիչներն ունենալ Պատգամատրական Ժողովում: Այս դէպքում միակողմանի չի լինի ընտրուած Պատգամատրական Ժողովը: Սա նշանակում է, որ դրա կողքին կը լինի նաև մեծամասնական ձևը և անկախ թեկնածուներ էլ կարող են լինեն: Ժողովուրդը աւելի հեշտ ձայն կը տայ մի երկու կամ աւելի ցանկերի ու անկախ թեկնածուների: Արդեօք հնարաւոր չէ՞ վերջնական որոշումը ընդունել միայն այն ժամանակ երբ բոլոր տարբերակները վերլուծման ենթարկուած կը լինեն:

**ԿԸՅ.-** Ես մի քիչ համառօտ կը բացատրեմ, բայց ցանկանում են հիմա հարցը վերադարձնել ձեզ, թէ ցանկերը ովքե՞ր պէտք է ներկայացնեն, ինչպէ՞ս էք պատկերացնում ցանկերը:

**Լոյս երկշաբաթերթ.-** Մեր պատկերացումը հետեւեալն է. օրինակ «Նարմաք» թաղամասում եղած բոլոր հասարակական միութիւնները կարող են իւրաքանչիւրը առանձին ցանկ տալ, կամ եթէ մտածում են համախոհ են, կարող են համախմբել և մի ցանկ ներկայացնել: Այսպիսով բոլոր կողմերի մասնակցութիւնը տարբեր ցանկերով երաշխատրում է այն, որ տարբեր միութիւններից էլ

Պատգամատրական Ժողովում ներկայ կը լինեն, ըստ իրենց ձեռք բերած ձայների տոկոսի:

**ԿԸՅ.-** Բայց ԿԸՅ-ը ինչպէ՞ս ճշտի եւ յայտնի, որ այդ քաղաքամասից միայն օրինակ Սիփան միութիւնը եւ ԲաՖՖին իրաւունք ունեն ցանկ տալու:

**Լոյս երկշաբաթերթ.-** Երեւի պէտք է ազատ թողնել ովքեր ցանկանում են ցանկ ներկայացնեն, ովքեր կուզեն անհատ թեկնածուներ :

**ԿԸՅ.-**Օրինակ եթէ 15 հատ ցանկ եկաւ, ինչպէս պէտք է անենք:

**Լոյս երկշաբաթերթ.-** Մենք իրական պայմանները պէտք է նկատի առնենք, մենք գիտենք մեր համայնքը, գիտենք միութիւնների թիւը, նրանց մօտեցումները և ուղղութիւնները: Դրանից ելնելով է, որ օրինակ հէնց «Նարմաք» թաղամասից, որ ամենահաշաշատ թաղամասն է հազիւ երեք հատ ցանկ ներկայացւի: Կարող են լինել նաև անհատ թեկնածուներ:

**ԿԸՅ.-** Տեսէք, ճիշտ հէնց ձեր ասածի պէս բոլոր ձևերը իրենց մէջ ունեն առաւելութիւններ և թերութիւններ: Ձեր եզրակացութիւնն է, որ երեք հատ ցանկ կը գայ, ես կարող եմ ասել, որ ոչ, կարող է 10 հատ ցանկ լինել, եթէ համամասնական է լինում, օրինակ՝ Հայաստանում ընտրութիւնների պարագային, այնտեղ մասնակցում են

կուսակցութիւններ, որոնք ունեն յատուկ գաղափարախօսութիւն, հիմա մեր ցանկ տուողները մեր ժողովրդին պէտք է այդ ձևով երևան գան: Սա դաստիարակութեան հարց է, մենք այդպիսի փորձ չենք ունեցել: Եթէ պէտք է ընդունենք այդ ձևը, պէտք է մեր ժողովրդին բացատրենք թէ նրանք ի՞նչպէս են ուզում համայնքը ղեկավարել, այսինքն ի՞նչ առաջադրանքներ ունեն մեր համայնքը ղեկավարելու համար, և

իրենց շրջապատի մէջ պէտք է սկսեն իրենց առաջադրանքները քարոզել: Այստեղ գրանցուած կուսակցութիւններ չունենք, հետեւաբար մենք կը դժարանք այդ ձևով պաշտօնական իրաւունք ստանալու համար: Մեր ժողովրդին դաստիարակել ենք մէկ ընդհանուր հարցերի համար, համայնքային շահերի իմաստով մենք մեր ժողովրդին նման բացատրութիւն չենք տուել: Մենք մտածեցինք, որ այս առաջարկը տանք Պատգամատրական Ժողովին, որ մի բան մտածի, եթէ սա արդար ձևն է, եւ որի մէջ տեսնում ենք նաեւ արդարութիւն, բայց նաեւ պէտք է ժողովրդին դաստիարակել այդ ձևով:

**Լոյս երկշաբաթերթ.-** Իհարկէ ռեալ պատկերը այն է, որ ուզեն թէ չուզեն թէկուզ որպէս անհատ թեկնածու էլ որ ներկայանան, պէտք է ունենան իրենց ծրագիրը, հիմա այս ծրագրերը համախմբում են և լինում են երկու կամ երեք և չեն լինում 12 կամ 50: Այդ երկու կամ երեք ներկայացուած ծրագրերի թիւում կանգնում են երկու կամ երեք միութիւններ: Դիշտ է նրանք կուսակցութիւններ չեն, բայց համայնքային հարցերի շուրջ կարող են տարբեր ծրագրեր ներկայացնել և երկու խորհրդի ստեղծման



# Հասարակական

մտավախություն չպետք է լինի, որովհետև մի Պատգամատրական ժողովի համար է ընտրապայքար գնում: Այս ձևով առեղծվածի կենդանի ու կենսունակ Պատգամատրական ժողով կը ստեղծվի, եւ տարբեր թեկնածուներ կամ պատգամատրներ կը մասնակցեն մի համընդհանուր Պատգամատրական ժողովի: Գիտականօրէն ընդունած է, որ եթէ ՊԺ-ում ընդհանրապէս մի ուժ լինի, առեղծվածի աշխուժութիւն կը ստեղծվի: Համամասնական ընտրատեղանակը ընդունելով կարող ենք այս առաւելութիւնը երաշխատել, բայց մեծամասնական տարբերակը կիրառելով հասանական է մի միակողմանի ՊԺ երեսան գայ և այդ դէպքում աշխուժութիւնը ինչպէս փորձը ապացուցել է կը վերացի: Անուագան կարելի է քննարկել բոլոր տարբերակները և յետոյ վերջնականապէս որոշում ընդունել:



**ԿԸՅ.-** Մենք կարող ենք առաջարկել նաև, որ այդ տարբեր գաղափարների տեղ մարդիկ գնան իրար հետ խօսեն և համաձայնութեան հասնելու պարագային մէկ շրջանից մէկ կամ երկու ցանկով երեսան գան: Սա առիթ կը հանդիսանայ կարճ ժամանակում եթէ կան այդպիսի խմբակցութիւններ ընտրատարածքներում համախմբուեն եւ մի ընդհանուր համաձայնութեան գան: Իսկ այս հարցը թողնենք և խօսենք մի կարեւոր դժարութեան մասին: Տեսե՛ք մի ամիս անցել է, բայց ոչինչ չէ խօսել այս առթիւ, այսինքն մասնաւոր մոյնիսկ այս հարցը չի արծածարծել և մենք պարտաւորուած այդ որոշումն ընդունեցինք (մեծամասնական ընտրածնի ընդունման որոշում): Մենք դէմ չենք, որ այդ հարցը կրկին վերլուծման ենթարկվի:

**Արաքս անագիր.-** Արդեօք դուք ընդունո՞ւմ էք, որ մեր համայնքում տարբեր մտայնութիւններ գոյութիւն ունեն, եթէ այդպէս է, փոքրամասնութեան տեսակէտների արծարծումը ինչպէ՞ս էք ապահովելու Պատգամատրական ժողովում: Քանի որ մեծամասնականի տարբերակը կիրառելու դէպքում, այսօրանից պարզ է, որ փոքրամասնութեան կազմից որեւէ մէկը չի կարող մուտք գործել ՊԺ:

**ԿԸՅ.-** Այս մօտեցումը դժբախտաբար իր խորքում նեղամտութիւն ունի, եթէ այսպէս սկսենք մտածել, որ եթէ մեծամասնական է, ուրեմն մէկ կողմն է յաջողելու և միս փոքրամաս կողմները չեն յաջողելու, արդէն ի սկզբանէ որոշումի մէջ հարց ենք դնում: Եթէ Իրանի մասշտաբով ընտրութիւնները մեծամասնական է լինում, ուրեմն միակողմանի՞ ընտրութիւն է եղել, ոչ, ժողովուրդը գալիս եւ ընտրում է: Բոլոր կողմերից էլ ընտրում են: Վերջին հաշիւով ժողովուրդն է ընտրողը:

**Լոյս երկչաբաթաթերթ.-** Միութիւնների կողմից աշխուժութիւն չի նկատուած, բացի մի ժողովրդական հաւաք, որ եղել է Մաջիդիէ թաղամասում, ուրիշ տեղ ոչ մի աշխուժութիւն չկայ: Արդեօ՞ք ԿԸՅ-ը այդ կապակցութեամբ ծրագիր ունի՞:

**ԿԸՅ.-** Այդ մտահոգութիւնը մենք էլ ունենք, այդ պատճառով էլ անցեալ շաբաթ մի նամակ ենք գրել բոլոր միութիւններին: Միգուցէ ամառային արձակուրդներն են խանգարում, բայց անրհրաժեշտ է միութիւնների աշխուժացումը: Միութիւնների վարչութիւնները անպայման օրակարգ պէտք է դարձնեն քարոզական այս աշխատանքը և ծրագրած աշխատանք տանեն:

**Լոյս երկչաբաթաթերթ.-** Մի խումբ թեկնածուներ հնարար է, որ անցեալ չորս տարւայ ծխական տուրքի վըճարած չլինեն, արդեօք նրանք կարո՞ղ են միանալ գումարը այդ չորս տարւայ ծխական տուրքի գումարը:

**ԿԸՅ.-** Այո, այդ հնարարութիւնը կայ և մինչև թեկնածու լինելը կարող են մուծել: Ծխական տուրք վճարելը ազգային պարտականութիւն է և երանի որ թեկնածուները կանոնաւոր վճարած լինեն, եթէ մէկը չի վճարել թող այսուհետեւ կատարի իր ազգային պարտքը:

**Լոյս երկչաբաթաթերթ.-** Առեղծվածի չի՞ լինի, որ այդ «աղամ է տու է փիշիկն»-ի պայմանը վերցնել, որովհետև այն մարդը որ պատրաստուած է ազգային հասարակական գործ անելու չենք կարծում, որ անբարոյական կամ քրէական գործ կատարած լինի, սա մի տեսակ լաւ տպաւորութիւն չի թողնում:

**ԿԸՅ.-**Ճիշտ է, բայց ինչպէ՞ս էք երաշխատում որ այդպիսի մարդիկ չեն լինի:

**Լոյս երկչաբաթաթերթ.-** Ենթադանումները կարող են իրենց հսկողութեան տակ առնել այդ հանգամանքը:

**ԿԸՅ.-** Սա պետական ընտրական օրէնք է, այսինքն, միութիւնների վարչութիւններից էլ պահանջում է դա: ■

Ճար. 1

Համար 5 խաչքառի լուծւած տարբերակը

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	կ	ա	ր	է	ն	դ	ե	մ	ի	ր	ն	ե	ա	ն	
2	ա	պ		ա	ւ	ե	ր	ի	ս		ա	ր	կ		գ
3	պ	ա	ր		ա	դ		ր	կ	ա	ր	ա	ն	ա	լ
4	ո	ր	ս	ա	գ	ո	դ		ա	ր	ե	ն	ա		լ
5	ց	ա		կ	ի	ր	ա	ր	կ	ե	լ		ի	ա	ն
6		ն	ա		չ	ա	փ	ա	գ		է	ր	ր		
7	դ		գ	ի		լ	ա	բ		ն	ա	ր	ի	ն	ջ
8	ի	լ	ա	մ		ք	մ	ա	ն	ա	ն		ր	ա	դ
9	մ	ի	ր	ու	մ		ա	ր	ա	գ		լ		դ	ա
10	ա		ու	ն	ա	պ		ա	ն	ա	պ	ա	գ	ա	լ
11	կ	ո	թ		դ	ր	ա	կ	ա	ն		ծ	ա	ւ	ի
12	ա	լ	ի	ր		ա	դ	ի	ք		գ	ա	ւ		ն
13	լ	ո	ն		ր	կ	ա	ր		ս	ո	ն	ա	ր	
14	ու	ր		ո	ր		չ	ա	լ		ն	ա	ռ	ու	մ
15	մ	ր	ա	գ	ա	ր		ն	ա	լ	ի	ւ		փ	ա

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՕԳՍԷՆ ԱԼԷՔՍԱՆԵԱՆԻ

ՀԵՏ



Թղթակից.- Դուք երկար տարիներ Պատգամատրական Ժողովի (Պ.Ժ.) անդամ էք եղել և Չեր կողմից տարած ազգային, հասարակական աշխատանքներով մեր համայնքում ճանաչում էք ձեռք բերել: Սակայն որպեսզի մեր ընթերցողը ասելի խոր տեղեկություններ ունենայ Չեր մասին, կը խնդրեմք ներկայացնել Չեր կենսագրական տեղալները:

Պատասխան.- Ծնել եմ 1939-ին՝ Սուլբանաբաղի շրջանի Ումրիան գիւղում, ունեմ երկու աղջիկ և մէկ տղայ: Երկու դստերես ամուսնացած եմ, իսկ տղաս դեռ ոչ: Կինս՝ Նոյեմիկը ես Սուլբանաբաղի շրջանի վերոյիշեալ գիւղից է:

Հ.- Ի՞նչ մասնագիտություն ունեք:

Պ.- Ես երկարագործ եմ: Շուրջ երեսուն տարի է, որ զբաղւած եմ վերելակի սենեակների և դռների պատրաստմամբ: Ունեմ իմ սեփական գործարանը:

Հ.- Լինելով 20 տարի Պ.Ժ.-ի անդամ, Դուք բաւական լայն տեղեկություններ պէտք է ունենաք ժողովի գործունեութեան վերաբերեալ: Ինչպէ՞ս կը գնահատեիք կատարած աշխատանքները:

Պ.- Ծիշտ է, 20 տարի է, որ հասարակական աշխատանք եմ տանում, բայց 15 տարի է, որ Պ.Ժ.-ի անդամ եմ: Իմ կարծիքով Պ.Ժ.-ը իր բոլոր պարտականությունները լիովին իրականացրել է:

Հ.- Թեմական Խորհրդի (Թ.Խ.) և ենթակայ մարմինների անդամների ընտրութեան գործում ի՞նչ պայմաններ և տեղալներ են հաշի առնել, ի՞նչ հիմունքների վրայ են ընտրել նրանք:

Պ.- Թեմական Խորհրդի ընտրութեան ժամանակ հաշի են առնում՝ նրանց կողմից իրականացած ազգային- հասարակական աշխատանքները, անհատական նկարագիրը և հեղինակությունը՝ ապրած բարոյաբանաստան, համայնքում:

Հ.- Փաստօրէն, ըստ Չեզ այս բոլորը պիտի արժեքաւորի և կարեւորութիւն ունենայ:

Պ.- Անկասկած: Երբ որեւէ անհատ առաջադրում է որպէս Թ.Խ.ի թեկնածու՝ պատգամատրների միջոցով, նա պէտք է ունենայ որոշ կրթութիւն, ազգային- հասարակական գործունեութեան անցեալ, անբիծ, բարոյական կերպար: Սակայն ենթակայ մարմինները նշանակում են Թ.Խ.-ի կողմից՝ խորհրդակցելով որոշ պատգամատրների հետ: Իհարկէ դրանք հաստատում են կրկին Պ.Ժ.-ի կողմից:

Հ.- Համայնքում առկայ է մի կարծիք, թէ ընտրւած մարմինների անդամները միակողմանի մտածելակերպ ունեցող անհատներ են եղել: Օրինակ, այն մարդիկ, որոնք այլախոս են եղել, բայց ունեցել են արժանիքներ և կարող էին համայնքին օգտակար լինել, չեն ներգրասել: Արդեօք այս կարծիքը Դուք չէ՞ք բաժանում:

Պ.- Ես այս կարծիքին չեմ, քանզի եթէ մէկը աշխատանք է տարել իր համայնքի համար, ուրեմն արժանի է եղել տեսալ գործին: Բազմիցս ինձ հարցրել են, թէ արդեօք այս կամ այն անհատը արժանի՞ է աշխատելու համար այս կամ այն մարմնի մէջ: Ինչպէս տեսնում էք աշխատանքներ տարել են այս ուղղութեամբ: Ինձ թում է, որ ամէն մարդ իր տեղում աշխատել է ջանքեր չխնայելով, և նրանցից ընտրել են լաւագոյնները: Ես չեմ ընդունում այն տեսակէտը, որ եթէ մէկը ցանկութիւն է ունեցել մասնակցելու այս գործին և արժանի է եղել, չի ներգրասել:

Հ.- Այսինքն որեւէ խտրականութիւն չի՞ դրսևորել ազգային մարմինների ընտրութիւնների ժամանակ:

Պ.- Ես խտրականութեան դրսևորում չեմ տեսել, եւ եթէ որեւէ մէկն էլ այլախոս է եղել, միեւնոյնն է, ներգրասել է ազգային մարմինների մէջ:

Հ.- Թ.Խ.-ում կամ, օրինակ Ս. Թարգմանչաց եկեղեցու խորհրդում, կարո՞ղ էք մատնանշել այդպիսի մարդկանցից մի քանի հոգու:

Պ.- Ես բոլորին չեմ ճանաչում, որպէսզի թարկեն:



Հ.- Չեր կարծիքով թեմի Առաջնորդը ի՞նչ վերաբերմունք պէտք է դրսևորի, համայնքում եղած, տարբեր կազմակերպութիւնների, միութիւնների նկատմամբ:

Պ.- Թեմակալ Առաջնորդները իրենք իրենց անելիքը քաջ գիտակցում են, բացատրութիւն տալու կարիքը չի զգացում: Օրինակ համուզած եմ, որ լուսահոգի Տ. Արտակ Սրբազանը շուրջ 40 տարի ղեկավարելով թեմը, արդարացրեց իրեն, կարծում եմ որ Սեպուհ Սրբազանն էլ նոյնը կանի:

Հ.- Բայց մասնատրապէս ի՞նչ մօտեցումներ պիտի ունենայ, ինչպէս արդէն նշեցիք, տարբեր խաւերի, խմբերի, միութիւնների նկատմամբ:

Պ.- Ես չեմ կարող Սրբազանին ուղղութիւն ցոյց տալ: Ինքը, վստահաբար, մեծահոգութիւն ունի, որպէսզի բոլոր միութիւններին հաւասար աչքով նայի՝ առանց խտրականութեան: Ես կարծում եմ միութիւններն են, որ պէտք է Սրբազանին թե ու թիկունք լինեն:

Հ.- Ի՞նչ նպատակի ծառայեցին Հայաստանի երկրաշարժի աղէտեղանքին օգնելու առիթով հաւաքւած գումարները, արդե՞օք դրանք ծառայեցին իրենց իսկ նպատակին:

Պ.- Օգնութեան մի զգալի մասը՝ տրամադրուեց աղէտեղանքին: Դիւանով գնեց հագուստեղէն, մթերք, եւ ուղարկեց, ապա մի քանի օդանաւ մթերք եւ 100.000 դոլար ուղարկեցինք Էջմիածին, իսկ մնացած դրամով կառուցեց ծորակաշինական գործարանը, որի շահագործումից յետոյ եկամուտը կրկին պէտք է ծառայէր իր նպատակին:

Հ.- Ընդհանուր հաւաքւած գումարը ինչքա՞ն է եղել:

Պ.- Կարծում եմ՝ 33 միլիոն թուման:

Հ.- Այդ գործարանը ի՞նչ վիճակում է գտնուում:

Պ.- Գործարանը դեռ չի շահագործուում: Գործարանը նպատակադրել ենք յանձնել Էջմիածնին, որի եկամուտը պէտք է տրի աղէտի գօտուն:

Հ.- Իսկ ո՞վ է այդ որոշումը կայացրել՝ պետութիւնը, Պատգամատրական Ժողովը՞ թէ Թեմական Խորհուրդը՞:

Պ.- Իհարկէ Թ.Խ.-ը՝ գործադիր մասինը, Պ.Ժ.-ն էլ տեղ է իր համաձայնութիւնը:

Հ.- Այսինքն որոշումը Պ.Ժ.-ի կողմից հաստատուելուց յետոյ է, Թ.Խ.-ը յանձնել Էջմիածնի՞ն:

Պ.- Այո:

Հ.- Փաստօրէն չէ՞ք վստահել պետութեանը:

Պ.- Ոչ, ոչ, քանի որ պետութեան հովանաւորութեան տակ գտնուող գործարաններից շատերի վիճակը անբարար է եղել, այդ պատճառով մենք ենք յանձն առել:

# Հասարակական

**Լ.- Գուք մտածել եք, թե էջմիածնին յանձնելով՝ գործարանը կը շահագործի՞:**

**Պ.-** Յոյսով ենք, այո:

**Լ.- Հիմա համայնքում պետք է անց կացուն Պ.Ժ.-ի ընտրութիւններ, Չեր կարծիքով դրանք կը լինեն համամասնական, թե՞ մեծամասնական:**

**Պ.-** Ես կարծում եմ, որ դրանք կանցկացնեն մեծամասնական եղանակով: Բայց միութիւնները եւ տարբեր խմբակցութիւնները կարող են իրենց թեկնածուներին ներկայացնել: Այդ բոլորից յետոյ ժողովուրդն է որ պիտի որոշի իր անելիքը:

**Լ.- Ինչպէս գիտեք միութիւնները կարելու դեր են խաղում ազգային եւ հասարակական կեանքում: Արդեօ՞ք բոլոր միութիւնների աշխատանքները անխտիր, այդ ուղղութեամբ, հասասա՞ր էք գնահատում: Եւ ընդհանրապէս նրանք ի՞նչ գործունեութիւն պետք է ծառայեն:**

**Պ.-** Ես բոլոր միութիւնների աշխատանքներին ծանօթ չեմ, ես Սիփան միութեան անդամ եմ: Սակայն իմ կարծիքով բոլոր միութիւնների աշխատանքը պետք է ուղղուած լինի հայապահպանման գործին, որը իրենք կատարել են եւ կատարում են:

**Լ.- Հայաստանի համար կոնկրետ ի՞նչ աշխատանքներ պիտի տարւեն: Ներկայացրեք խնդրեմ, մէկ միութեան կողմից՝ այս ուղղութեամբ տարւող աշխատանքների բնոյթը:**

**Պ.-** Ամէն մի միութեանական պետք է իր բնակութեան վայրում ազգային բարօգնութիւն տանի:

**Լ.- Արդեօ՞ք դուք ճանաչում եք այնպիսի անհատների, կամ խմբերի, որոնք խոչընդոտ հանդիսանան իրենց կողմից անընդունելի համարող թեկնածուների հանդէպ:**

**Պ.-** Նման բան չեմ նկատել, բայց ինչ վերաբերում է մեր ժողովրդին, ապա պետք է բոլորը մասնակցեն ընտրութիւններին: Ամէն մարդու իրաւունքն է, թէ ում կը տայ իր ձայնը:

**Լ.- Եթէ որեւէ յուշեր ունեք Պ.Ժ.-ի հետ կապուած, կը խնդրենք պատմել:**

**Պ.-** Ոչ, պատմելու բան չունեմ, յուշ չկայ, որ պատմեմ:

**Լ.- Ինչպիսի՞նք էք պատկերացնում նորընտիր Պ.Ժ.-ի գործունեութիւնը՝ ներկայումս համայնքում սիրող մթնոլորտում: Ի՞նչ էք կարծում, կրկին նոյն մարդի՞կ կընտրուեն:**

**Պ.-** Ոչ, ես կարծում եմ, որ Պ.Ժ.-ի կազմը կը համարյա նոր ուժերով, որոնք կը բերեն նոր մտքեր, եւ Պ.Ժ.-ի աշխատանքը ւսելի արդիւնատու կը լինի:

**Լ.- Ինչպիսի՞նք աշխատանք պետք է տանենք համայնքում, որպէսզի ամէն մարդ ներգրաւի հանրօգուտ ազգային գործի մէջ: Ինչպէ՞ս կարող ենք նոր սերունդներին փոխանցել ճիշտ հայեցի դաստիարակութիւն, որպէսզի նրանցից ամէն մէկը պարտականութեան զգացում ձեռք բերի եւ գիտակցի իր դերը համայնքում:**

**Պ.-** Ես կարծում եմ նախ իւրաքանչիւր անհատ պետք է դա ձեռք բերի իր ընտանիքում, քայլ առաջ կատարելով: Եթէ այդ պատրաստ հողը չլինի, մենք որեւէ արդիւնքի չենք կարող հասնել: Մարդը ինքը գիտակցելով ազգային, հասարակական աշխատանքների կարեւորութիւնը, պետք է կրի որոշ գրկանքներ, անի որոշ գոհաբերութիւններ՝ ժամանակը տրամադրելով այդպիսի ազգաներ աշխատանքի համար:

**Լ.- Վերջերս քննադատութիւն է եղել Պ.Ժ.-ի վերջին որոշման նկատմամբ, ըստ որի անհամաձայնութիւն է դրսևորել այն մօտեցման հանդէպ, թէ ընտրողների տարիքը պետք է 18-ից ցածր չլինի: Ի՞նչ է Ձեր կարծիքը:**

**Պ.-** Պ.Ժ.-ում ամէն պատգամատուր կարող է արտայայտել իր սեփական տեսակէտը, սակայն վերջնական որոշումը կայացուած է քննարկումից յետոյ, մեծամասնութեան ձայների հիման վրայ:

**Լ.- Նախկինում եղել է այնպիսի մի դէպք, որ Թեմական Խորհուրդը որեւէ որոշում ներկայացրել է Ընտրական Յանձնախումբին, եւ վերջինս դա չի ընդունել:**

**Պ.-** Ընտրական Յանձնախումբը նոր է կեանքի կոչել:

**Լ.- Ի նկատի ունեն նախկին խորհուրդը:**

**Պ.-** Թ.Խ.-ի առաջարկները կարող են նաեւ չհաստատուել:

**Լ.-** Լսել ենք, որ կրկին պատրաստուած են նոյն առաջարկը մերժելու, նորից քննարկման առարկայ դարձնելով: Եթէ մի հարցի շուրջ արդէն որոշում է կայացուել, ճի՞շտ է արդեօք այն կրկին դնել քննարկման:

**Պ.-** Ծիշտը կամ սխալը ես չեմ ուզում ասել: Բայց որոշել է, որ այդ հարցը կրկին մուտք գործի Պ.Ժ.-ի օրակարգ:

**Լ.- Հայաստանում խորհրդային կարգերի փլուզումից յետոյ, մեր իրանահայ համայնքը ինչպիսի՞ օժանդակութիւն է ցոյց տւել Հայաստանի Հանրապետութեանը:**

**Պ.-** Մեր ժողովուրդը ոչինչ չի խնայել Հայաստանին օգնութեան հասնելու համար, քանզի ես անձամբ ականատես եմ եղել՝ լինելով այդ յանձնախմբի անդամ: Օրինակ՝ 1993-ին մենք բաւականին ալիւր եւ վառելիք ուղարկեցինք Հայաստան: Գրանք հիմնականում տրամադրեցին Մեղրիի եւ Ղափանի բնակիչներին: Եւ եթէ հարկ լինի մեր ժողովուրդը կրկին կը մասնակցի այդ հայրենասէր գործին:

**Լ.- Համեմատած այլ սփիւռքահայ գաղթօջախների, մեր համայնքի կողմից տրամադրած օգնութիւնը ի՞նչ չափի է եղել, ինչպէ՞ս կը գնահատէիք:**

**Պ.-** Ի տարբերութիւն այլ գաղթօջախների, իրանահայ համայնքի կողմից տրամադրուած դրամական օգնութիւնը մեծ գումար չի կազմել, քանի որ Իրանում տարադրամի արժէքը բարձր է եղել եւ համեմատելն անհիմաստ է:

**Լ.- Իսկ Պ.Ժ.-ը հաշիւութիւններ կայացնելու է ժողովրդին՝ իր կատարած գործունեութեան մասին:**

**Պ.-** Ինչպէս գիտեք Պ.Ժ.-ը ամէն երկու տարին մէկ զեկուցում է տալիս՝ կատարած աշխատանքների մասին: Հիմա էլ Պ.Ժ.-ի դիւանը ժամանակին կը ներկայացնի իր զեկուցը:

**Լ.- Ընտրութիւններից առաջ Պ.Ժ.-ը հաշիւութիւններ կայացնելու որոշում կայացրել է, թե՞ ոչ:**

**Պ.-** Ոչ:

**Լ.- Իսկ օրակարգում հաշիւութեան նախապատրաստման հարցը չի բարձրացուել:**

**Պ.-** Օրակարգում չի եղել, դիւանն ինքը կը որոշի, թէ ինչ անի:

**Լ.- Պ.Ժ.-ը մինչեւ հիմա՞ քիչքէի ատումով, որեւէ պակասութիւն ունեցել է:**

**Պ.-** Այդ երեսնոցը միշտ էլ եղել է: Դա եղել է 20 միլիոնի, 40 միլիոնի, 30 միլիոնի չափով:

**Լ.- Ինչո՞ւ Պ.Ժ.-ը իր մնայուն եկամտաւոր աղբիւրը չի ստեղծում, որպէսզի նման դժարութիւններ չունենայ:**

**Պ.-** Միշտ էլ մտածել է, բայց մեր համայնքի ծախսը միշտ էլ գերազանցել է մեր եկամտին: Նոր ձեւեր, նոր եղանակներ պիտի մշակուեն այս բացը լրացնելու համար:

**Լ.- Պ.Ժ.-ի ընտրութիւնների վերաբերեալ ի՞նչ պատգամ ունեք: Այն ի՞նչ հիմունքների վրայ պիտի կազմվի:**

**Պ.-** Ես կը խնդրեի ժողովրդից, որ անպայմանօրէն մասնակցի ընտրութիւններին եւ քննարկի իր ցանկացած թեկնածուին, առանց որեւէ մէկի թելադրանքի:

**Լ.- Անպայման ծանօթ էք «Լոյս» երկշաբաթաբերին: Չեր կարծիքն ի՞նչ է այս քերթի կապակցութեամբ, եւ ի՞նչ սպասելիքներ ունեք ընդհանրապէս իրանահայ համայնքի մամուլի վերաբերեալ:**

**Պ.-** Ես շատ ուրախ եմ, որ դուք այսօր կազմակերպել էք այս հանելի հարցազրոյցը: Մեր մամուլը այն տեղեկութիւնները, որոնք փոխանցում է ժողովրդին պետք է ունենայ ստոյգութիւն: Մամուլը պետք է առողջ լինի:

**Թղթակից.-** Ընտրակալութիւն ենք յայտնում, որ համերկատարութեամբ պատասխանեցիք մեր հարցերին: ■

Հարցազրոյցը վարեցին՝  
**Ռ. Կորիւն**  
**Ռ. Սարդարեան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

*(Պատմական ակնարկ)*

Պատերազմի եւ խաղաղութեան, ինքնապաշտպանութեան, անկախութեան, սոցիալտնտեսական բարեփոխումների, գաղթականության եւ համանման խնդիրներ քննութեան առարկայ դարձան, ինչպէս Անդրկովկասեան սէյմում, այնպէս էլ Հայոց Ազգային ժողովի ու Ազգային խորհրդի նիստերում: Մասնատրապէս, կարեւոր էին Հայոց Ազգային ժողովի հրահրած 1918թ. ապրիլի, 1918-ի Թիֆլիսի, Հայոց Ազգային խորհրդի ապրիլի 6-8-ի Ալեքսանդրապոլի եւ մայիսի 25-26-ի Թիֆլիսի նիստերը: Վերջին նիստում Հայոց Ազգային խորհուրդն իր վրայ վերցրեց հայկական շրջանների նկատմամբ ժամանակատր կառավարութեան ֆունկցիաներ, իսկ մայիսի 28-ին վճիռ կայացրեց Հայաստանի անկախութեան մասին: Յատկանշական է, որ թէ Հայոց Ազգային խորհրդում եւ թէ Ազգային ժողովում հայ քաղաքական կուսակցութիւնները հիմնականում հանդէս են եկել ազգային միացեալ ճակատով:

Ծագած ներքին սուր հակասութիւնների պատճառով 1918թ. մայիսի վերջերին Անդրկովկասեան դաշնութիւնը քայքայեց եւ դրա վիստակների վրայ առաջացան Վրաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի անկախ հանրապետութիւնները:

Հայաստանի անկախութեան հրռչակումից յետոյ 1918թ. յուլիսին Հայոց Ազգային խորհրդի հիմքի վրայ ձեւաորոնց ՀՀ Գերագոյն օրէնսդիր մարմինը՝ Հայաստանի Խորհուրդը (խորհրդարանը):

ՀՀ գոյութեան 2,5 տարայ ընթացքում կազմել է երկու գումարման խորհրդարան՝ առաջինը, որպէս Հայոց Ազգային խորհրդի իրաւայաջորդ, առանց ընտրութիւնների, բազմակուսակցական հիմքի վրայ՝ Ազգային խորհրդի անդամների (15) թի համամասնական եռապատկման, ինչպէս նաեւ ազգային փոքրամաս-

նութիւնների՝ բուրքերի, ռուսների, եզդիների, ներկայացուցիչների հրաւիրման միջոցով (ընդամենը 46 պատգամատր), գործել է 1918թ. օգոստոսի 1-ից մինչեւ ՀՀ վերջին օրը՝ 1920թ. դեկտեմբերի 2-ը: Այդ ընթացքում կազմել է չորս կառավարութիւն (կաբինետ): Առաջին խորհրդարանի մախազահն էր՝ Ա.Վ. Սահակեանը, իսկ երկրորդինը՝ Ա. Մհարոնեանը: Առաջին գումարման խորհրդարանը ունեցել է 14, իսկ երկրորդը՝ 12 յանձնաժողովներ: Խորհրդարանին կից գործել է Պետական Վերահսկողութեան մարմին, որն իրականացրել է Վերահսկո-

ւրան բնորոշ գրեթէ բոլոր անկապտելի յատկանիշներով՝ դրօշով, զինանշանով, օրհներգով, բանակով, դիւանագիտական կապերով, դրամանիշով, ազգային պետական կրթական ու մշակոյթի օջախներով եւ այլն, որոնք սահմանել եւ գործողութեան մեջ էին դրել համապատասխան օրէնքներով:

Հանրապետութիւնում եւ նրա խորհրդարանում գոյութիւն է ունեցել բազմակուսակցական համակարգ: Գործել են խորհրդարանական խըմբակցութիւններ, եղել է ընդդիմութիւն, թոյլատրել են այլախոհութիւն եւ այլն: Հայաստանում գործող շուրջ մէկ տասնեակի հասնող քաղաքական կուսակցութիւնները յարել են գաղափարաքաղաքական տարբեր թելերի ու հոսանքների, լոյս են տեսել աւելի քան երեք տասնեակ անուն տարաբնոյթ թերթեր ու ամսագրեր:

Հայաստանը խորհրդարանական, դեմոկրատական հանրապետութիւն էր, որի սահմանադրութիւնը եւ այլ հիմնական օրէնքները ծրագրում էր մշակել եւ ընդունել Հայկական հարցի վերջնական լուծումից, այսինքն՝ Միացեալ եւ Անկախ Հայաստանի ստեղծումից յետոյ:

Պետութեան գլխատր իրաւասութիւնները օրէնսդիր, մասամբ նաեւ գործադիր, պատկանել են խորհրդարանին: Գործադիր իշխանութիւնը՝ կառավարութիւնը, ձեւաորել ու հաստատել է խորհրդարանի կողմից: Կառավարութեան մախազահը՝ վարչապետը, հաշուետու էր խորհրդարանի առջեւ: Սակայն սահմանադրութեան բացակայութեան պայմաններում յստակօրէն սահմանազատում չեն եղել օրէնսդիր, գործադիր եւ դատական իշխանութիւնների իրաւասութեան շրջանակները:



րութեան գործադիր իշխանութեան՝ կառավարութեան գործունէութեան վրայ:

Հայաստանի առաջին Հանրապետութիւնը իր կարճատեւ գործունէութեան ընթացքում ընդունել է 300-ից աւելի օրէնքներ, որոնց մի մասը, սակայն, եղել են ընդամենը որոշումներ եւ կառավարչական հրահանգներ: Ընդունւած օրէնքներից կարեւորների թիւն կարելի է դասել՝ արդարադատութեան եւ դատարանակազմութեան, ինքնավարութիւնների, անօրինական գէնքի բռնագրաման, լեզւի, դպրոցների, գաղթականութեան խնամատարութեան, բանակի, սոցիալական պաշտպանութեան, տնտեսական վերաշինութեան մասին եւ այլն:

1919թ. կէտերից Հայաստանը արդէն կազմակերպւած պետութիւն էր,

**Շար. 2**

# ՊԱՐՍԿԱԿՆ ՄԱՄՈՒԼԸ ՇԱՅ ՊՈԷԶԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Ը. Ը. Մովսիսեան



Հայ բանաստեղծութեան մէջ մենք ականատես ենք լինում պայքարի ու սրխ-բանքների, տեղեկանում ենք հայ ժողովրդի իղձերին ու ձգտումներին: Մի ժողովուրդ, որը յաճախ ենթարկւել է ցեղասպանութեան: Մի ժողովուրդ, որը լաւ է ըմբռնում «սէր» և «մտերմութիւն» բառերի իմաստը: Մի ժողովուրդ, որ պատմութեան ընթացքում բոլոր անիրաւութիւնները ճաշակելուց յետոյ պահպանել է իր ազգային նկարագիրը, մշակոյթն ու բանահիւսութիւնը:

«Ըլիան» («Աշխարհ»), *թերթ*

Հայ բանաստեղծութիւնը ազնիւ է ու մարդասիրական: «Օտարութիւնը», «վիշտը», «մենակութիւնը» առանձնա-յատուկ տեղ են գրաւում հայ բանաստեղծութեան մէջ: Հայ բանաստեղծութիւնը նորեկ չէ: Նա ունի խոր արմատներ, իսկ հայ բանաստեղծը իր շրջապատի մարդկանց համար օտարուտի չէ, այլ ապրում է նրանց մէջ: Ասում են. ամէն մի հայի մէջ մի բանաստեղծ է նստած: Այս խօսքի ճշմարտութիւնը մենք ընկալում ենք այդ ազգի անկեղծութեան մէջ:

«Էթելաթ» («Լուրեր») *թերթ*

Մեզ, իրանցիներիս համար, որ դարեր շարունակ շրջան ման մէջ ենք եղել հայ ժողովրդի հետ և առնչել նրա ծնունդավայրի հետ, կատարեալ անհրաժեշտութիւն է դառնում նաև նրա մշակոյթի իմացութիւնը: Քանի որ ամէն մի ազգի մշակոյթի և գրականութեան հետ ծանօթանալն է, որ խորը և մտերիմ փոխըմբռնում է առաջ բերում ազգերի միջև:

«Չանէ ռուզ» («Այսօրայ կիմը») *թերթ*

Հայ գրականութիւնը թափառական, սակայն զգացմունքով լի մի ժողովրդի գոյութեան ամենաերևելի փաստաթուղթն է: Ժողովուրդ, որ պատմական իրադարձութիւնների բովում միշտ էլ ապացուցել է իր գոյութիւնը, միաժամանակ գտնելով ազատ շնչելու ուղիներ: Եւ այդ փաստաթղթերի ընդերքում հայ բանաստեղծութիւնը ունի վսեմ դիրք:

«Ըլիան» («Աշխարհ») *թերթ*

Հայ բանաստեղծը հարազատ զաւակն է մի ժողովրդի, որի կեանքի պատմութիւնը ցաւի, տանջանքի, արեան ու տառապանքի գիրք է: Մի ժողովուրդ, որի կեանքի փորձութիւնը, առանձին վերցրած, աշխարհի քաշած տառապանքի ամբողջութիւնն է կազմում, որովհետև այն արհաւիրքը, որ այլ ազգեր ճաշակել են առանձին-առանձին, հայ ժողովուրդը տեսել է համատեղ: Չափազանցութիւն չի լինի, եթէ ասելու լինենք, որ հայ ժողովուրդը իր պոեզիայով ողջ մարդկութեան բերանով զայրոյթի կոչ է արել բռնութեան դէմ և գերութեան ճիրաններում պայքարել է գերութեան դէմ:

«Ռուշանֆերը» («Լուսամիտ»), *ամսագիր*

Հայ բանաստեղծութիւնը մարդկութեան մնայուն երգն է՝ պատմութեան դաժանութիւնների դէմ և ազգերին ու ժողովուրդներին միմեանց միացնելու խորհրդանիշը: Հայրենի երկրից անջատաւածութիւնը և այն գրկանքները, որ պատմութեան ընթացքում ճաշակել է այդ ժողովուրդը, մի տեսակ թախծոտ երանգ են հաղորդել նրա քննարգութեանը:

«Չանէ ռուզ» («Այսօրայ կիմը») *թերթ*

Բացի հայ պոեզիայի մասին տաժ ընդհանուր այս գնահատականներից, պարսիկ գրական միտքը շատ ուրոյն ասպեկտով է քննարկել նաև հայ բանաստեղծների աշխարհայեացքը, նրանց ըմբռնաաշունչ ու կենսատենչ, բայց միևնոյն ժամանակ հումանիստական ուղղութեամբ տոգորած պոեզիան:

Յիշատակենք այդ փաստերը:

## ԵՂԻՉԷ ՉԱՐԵՆՑ

Չարենցը, յեղափոխական այդ բանաստեղծը, իր կեանքը չխնայեց ազատութեանը և նոր պոեզիայի կատարելութեանը հասնելու համար: Անկարելի է մոռանալ Չարենցի անհատականութիւնը: Այսօր, երբ մտարդեան լեզուն և Նարեկացու մատենագրութիւնը պայծառ կերպով շողոռում են հայ գրականութեան պատմութեան ճակատին: Չարենցի ոգին՝ իր անմահ ստեղծագործութիւններով շարժման մէջ է յափտեմականութեան առանցքի շուրջը: Նա հայրենիքի և իր ժողովրդի սիրոյ մարմնացումն է: Չարենցի պոեզիայի ազդեցութիւնը անսահման և անմոռաց է ամբողջ հայութեան համար:

Չարենցը՝ իր կենսաբեր պաթոսով և անսպառ սիրոյ զգացմունքներով, բանաստեղծական մի հոյակապ սիմֆոնիա ստեղծեց, և այդ ներդաշնակ սիմֆոնիայի միջոցով նւաճեց ապագային հասնելու յաղթողին, արժանանալով ազգերի և յեղափոխական բանաստեղծի կոչմանը:

«Խուշէ» («Շասկ»), *երկշաբաթեայ հանդէս, Թեհրան, 1967, No 39, էջ 7*

Մինչև այժմ վերլուծական բազմաթիւ աշխատութիւններ են գրուել և դեռ էլի կը գրուեն Չարենցի գործերի գեղարուեստական արժէքի ինքնատիպ առանձնայատկու-

## Մշակոյթ

քեան մասին, սակայն այն, ինչ կարելի է մի խօսքով ասել Չարենցի մասին, այն է, որ հայ ժողովրդի վսեմ գրականութիւնը չի կարելի պատկերացնել առանց Չարենցի շլացնող պայծառութեան:

Անմաղ Նուրիգադէ, Եղիշէ Չարենց, «Սորոտիայէ սորիս»

(«Կարմիր երգեր»), Թեհրան, 1979, էջ 4

## ԱԲԵՏԻԿ ԻՍԱՐԱԿԵԱՆ

Իսահակեանի պոեզիայի ընդերքը անյատակ խորութիւն ունի: Նրա «Դարդը սորիս» երգը հայրենիքից հեռու ընկած թափառական ու հայրենատենչ իւրաքանչիւր հայի «անձնագիրն» է: Հանճարեղ քնարերգուի ստեղծագործութեան մէջ տեղ գտած որոշակի ստեղծութիւնը... ուղղած է մարդկութեան թշնամիների հասցէին...:

«Համաւէյէ անրուի» («Վշտի դիւցազներգութիւն»),  
Հայ բանաստեղծութեան հատընտիր, Թեհրան, 1968,  
էջ 25

## ՅՈՎՐԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

Թումանեանի քառեակներն իրենց խոր փիլիսոփայական խոհերով կարելի է համեմատել պարսիկ դասական բանաստեղծներ Օմար Խայամի, Խաղանու և Հաֆէզի քառեակների հետ:

Անուշի և Սարոյի նիւրական սերը կարելի է նմանեցնել «Լէյլի և Մեջնուն» և «Իստֆ և Ջոլէյխա» պոեմներին:

Յովհաննէս Թումանեանի ստեղծագործութիւնները վերածեցին կեանքի և կրակի: Կեանքի վերածեցին, որ ապրեն յաւիտեան, կրակի վերածեցին, որպէսզի այրեն հասարակութեան մէջ բոյն դրած մակարոյծներին:

«Անուշը» յօրինող Թումանեանը, հայ բանաստեղծութեան մի հարուստ շտեմարան է: Նա ստեղծագործում է յստակ ու ճշմարիտ: Իւրաքանչիւր երկ ստեղծագործելիս, նրա ոգին ճախարում է ամպերից էլ վեր, ծիածանից էլ բարձր, որպէսզի կեանքը դարձնի աւելի անաղարտ, աւելի անբիծ...:

Բ. Իմամի, «Էթթելաթ» («Լուրեր»),  
Թեհրան, 1969, No 13036

## ՅՈՎՐԱՆՆԵՍ ԾԻՐԱԶ

...Շիրազը սովորական շրջանի անմահութեան արժանացած մեծագոյն հայ պոետներից է: Նրա իւրաքանչիւր երկ, ստեղծելուց առաջ, մկրտում է որոշակի նպատակով: Այդ նպատակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ ճանապարհ դէպի լուսատր սպազայ:

Շիրազի բանաստեղծութիւնը ծնելուց յետոյ դարաշրջանի մթնոլորտը յագեցնում է բուրմունքով, իսկ արւեստագէտի խօսքը, աշխարհի որ անկիւնում էլ լինի, դարձնում հմայող ու կախարդիչ: Շիրազի բանաստեղծական մի տողը արժէքատր մի գրքի հանդէպ կարող է

հզօր ու անասան մնալ: Նրա «Բիրիլիականը», որը պարսկերէնով վերանահանել է «Վշտի դիւցազներգութիւն», կարելի է համարել աշխարհի ամենավսեմ պոեմներից մէկը:

«Էթթելաթ» («Լուրեր»), թերթ, 1969, No 13036

## ՊԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Անցեալը, ներկան ու գալիքը երեք կողմից ներթափանցում են հայ պոեզիայի բովանդակութեան մէջ՝ պարզեւելով նրան քնարական առանձնայատուկ որակ և անգուգական ներշնչանք: Դանիէլ Վարուժանը անկեղծօրէն գալիք օրերի գեղեցկութիւնն է տեսնում:

Իր պոեզիայով նա երբէք չի հեռանում ժամանակից ու մարդուց: Սարսափն ու բարին, ճշմարտութիւնն ու կեղծիքը նա համատեղ վերցնում է մարդու և ներկայացնում հենց իրեն՝ մարդուն: Դանիէլ Վարուժանի ստեղծագործութեան հայելում կեանքն է արտացոլւած՝ իր անհատնում շարժման պաթոսով, որը, անգամ մահից յետոյ, կեանք է պարզում մեռելներին:

Եթէ խօսքը, իմաստը և պատկերը բանաստեղծութեան բնորոշ առանձնայատկութիւններից են, ապա Դանիէլ Վարուժանը այդ առանձնայատկութիւնների համապարփակ խտացումն է: Դանիէլ Վարուժանը ձգտում է ցուցադրել մարդկային հոգու մաքրութիւնը: Նա ուզում է ասպետի պէս աներկիւղ արշաւել մինչև պոեզիայի կատարելութեան սահմանները, արդարութիւնն ու անաղարտութիւնը անկաշկանդ երգելու համար:

«Էթթելաթ» («Լուրեր»), 1972, No 13775

## ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿ

Պարոյր Սևակը իր դարաշրջանի բանաստեղծն է, դարաշրջան, որը, նրա կարծիքով, ամենամեծ քննադատըն է, իսկ ամենից շատ քննադատողը ինքը՝ բանաստեղծը:

Պարոյր Սևակին քննադատութիւնն է դարձրել բանաստեղծ և ոչ թէ գովասանքների շոյշուրթիւնը: Նա իր ժամանակի գաւակն է, իր դարի ունկնդիրը: Այն դարաշրջանը, որը ծուլւած է երկաթի, ծխի, հրետանու, դինամիտի և ատոմի խառնուրդով:

«Էթթելաթ» («Լուրեր»), թերթ, 1969, No 13036

Պարոյր Սեւակի բանաստեղծութիւնների մէջ մարմնաւորւած են հայ ժողովրդի ճակատագիրն ու պատմութիւնը: Ես սիրում եմ նրա երկերի ընդերքում շառաչող անհանգստութիւնն ու յարձակողական համարձակութիւնը:

Մոնշիգադէ, Պարոյր Սեւակ «Աւայէ խամուշ նաշո-դանիէ նաղուս» («Անլեւելի գանգակատուն»), Թեհրան, 1978, առաջաբան:



Եղևարդ  
Շախվերդեան



՝ շ ՄԻ շ Ծ  
Ի օ շ ԷԱ

Ինձ տարածութիւն է պէտք՝  
Մի ձայնի տետրութեամբ,  
Մի ողջոյնի...

Չկները չեն լողում միայն ջրերում,  
Եւ քիչ է տարածութիւնն  
ովկիանների...

Նրանք լողում են  
Ջրերում արտացոլած երկնքի մէջ,  
Աստղերի,  
Լուսնի  
Եւ արեւի:

Ես կանչեցի արեւին  
Եւ երկինքն ակարեցի  
Ինձ շրջապատող պատերի վրայ,  
Մակայն ճաղերը  
Կտրատում, սեղմում են  
տարածութիւնն իմ,  
Եւ իմ ձայնը խլանում է  
Արգելապատերի աղաղակող  
լռութեան մէջ:

Մեր միջեւ արգելապատեր կան՝  
Գերած լռութեան կողմից:  
Եւ ճաղեր, ճաղեր,  
Որոնք անխոհեմ  
Քատատում են տարածութիւնն իմ:

Եթէ գաս մի օր  
Եւ ես չլինեմ,  
Քանդիր ճաղերը գերեզմանոցիս  
Եւ բեր ինձ համար  
Տարածութիւն՝  
Մի ողջոյնի չափ:

Ö շ ՄԻ շ Ծ շ Ի Ա

Մայրերգի ծառերը  
Գրկել չեն կարող միմեանց.  
Նրանց թեւերը կտրատում են միշտ,  
Ինչպէս թեւերն իմ՝  
Անիմաստ ձգած տարածութեան մէջ  
Եւ այս լռութեան,

Որ փայտահատ է՝  
Իմ ու քո միջեւ:

È è à ô Æ Õ Û Æ ò  
Û ° î à Û

Լռութիւնից յետոյ՝  
Անգուսպ ձեռքեր,  
Հաստատուն քայլեր  
Եւ ձայն մարդկային:  
Լռութիւնից յետոյ՝  
Արիւն,  
Կրակ,  
Ու հառաչանք:

Լռութիւնից յետոյ՝  
Խոշտանգւած մամին,  
Մի խոնար խուց անլուսամուտ,  
Մի ժանգոտած հին միզաման  
Եւ քետոնէ մի մահճակալ...

Լռութիւնից յետոյ՝  
Գնդակի հետքեր պատի վրայ  
Ու... սրտի...

À è â à ò Û

Վանդակի մէջ վանդակ,  
Վանդակի մէջ վանդակ,  
Վանդակի մէջ թռչուն:

Թռչունի մէջ թռչուն,  
Թռչունի մէջ թռչուն,  
Թռչունի մէջ հոգի:

Հոգու մէջ հոգի,  
Հոգու մէջ հոգի,  
Հոգու մէջ լոյս:

Լոյսի մէջ լոյս,  
Լոյսի մէջ լոյս,  
Լոյսի մէջ կեանք:

Կեանքի մէջ կեանք,  
Կեանքի մէջ կեանք,  
Կեանքի մէջ ոչինչ:

Ոչինչի մէջ ոչինչ,  
Ոչինչի մէջ ոչինչ,  
Ոչինչի մէջ մենք:

Մենք՝  
Միրտ ու հոգի՝ թռչուն,  
Մենք՝

Միրտ ու հոգի եւ լոյս,  
Մենք՝  
Լոյսի մէջ ոչինչ:


Լոյսի հոգին թռչուն,  
Լոյսի հոգին արիւն,  
Եւ արեան մէջ թռչուն:

Ø ° Û à ô Æ Õ Û

Աւելի քան  
Պատերը՝ առաստաղների,  
Շրջանակները՝ նկարների,  
Փականները՝ բանալիների,  
Մուտքները՝ առարկաների,  
Աւելի քան  
Բառը՝ իր իսկ արմատին,  
Գետը՝ սեփական հունին,  
Միրտը՝ բանականութեանը  
Եւ բանականութիւնը՝ ներշնչանքին  
Դու հաւատարիմ ես ինձ:  
Իմ սրտի մէջ,  
Իմ աչքերում,  
Իմ կարօտի տան պատերին  
Դրոշմած է քո կնիքը:  
Օհ, մենութիւն՝ հրաշագործ ու  
խոշտանգող,  
Քո սեւեռուն պաղ հայեացքով,  
Անփառունակ քո սուրբով՝  
Այսպէս անվերջ պիտի գնանք,  
Պիտի գնանք,  
Պիտի գնանք...  
Կամ դէպի ափ,  
Կամ ովկիանը անյայտութեան:



Ճանաչենք մեր  
լաւագոյն  
աշակերտներին



Երիկ Յարութիւնեան  
«Ն. Գիւլբենգեան» դպրոց  
Գ. դասարան

# ՀԱՆՌԻՊՈՒՄ ԿԻՊՐՈՍԻ՝ «ՄԵԼՔՈՆԵԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆԻ ՅԵՏ

Հայ Բարեգործական Ընդհանուր (ՀԲԸ) միության նախաձեռնությամբ շաբաթ, յուլիսի 8-ին կազմակերպվել էր հանդիպում «Մելքոնեան» վարժարանի տեսչուհու հետ՝ նույն միության սրահում:

Ներկայ էին վարժարանի մասին հետաքրքրուողներ:

Հանդիպման բացումը կատարեց պրն. Զորա Յակոբեանը, ապա՝ բեմ հրահիղեց տիկ. Աստղիկ Բաբայեանին, որը համառոտակի բացատրեց ձեռնարկի նպատակը, ապա ներկայացրեց «Մելքոնեան» վարժարանի պատմա-կանից ընդհանուր գծեր, այնուհետև բեմ հրահիղեց օր. Անի Լաչինեանին:



Յարգելի տնօրենը նախ յետադարձ ակնարկ ցնեց վարժարանի հիմնադրման կատարած ծառայությունների մասին, բացատրություններ տուեց աշակերտների ընդունման, ուսման եւ կեցութեան շուրջ, ընդհանուր առմամբ վարժարանին կապուող տեղեկություններ փոխանցեց: Վիդեո-տրիպով ցուցադրեց շենքի համապատկերը, աշակերտութեան դպրոցական կեանքը եւ այնուհետև նա պատասխանեց հարցերին:

Վերջում «Լոյս»-ի թղթակիցը հարցազրոյց ունեցաւ յարգելի օր. Լաչինեանի հետ, որը ներկայացոււմ է ստորեւ:

**«Լոյս».- Օր. Լաչինեան Ձեր ժամանումը Թեհրան մեր ուշադրութեան կենտրոնումն է, նկատի առնելով, որ «Մելքոնեան» վարժարանը մեր սփիւռքեան ուսման կարևոր օջախներից է, այդու շտապեցի՞նք Ձեզ հետ գրոյց ունենալ, նախքան Ձեր մեկնումը, տեղեկություններ քաղել վարժարանի մասին:**

Խնդրում եմ Ձեզ ներկայացնել, անշուշտ Դուք հանրաճանաչ դէմք էք Ձեր վաստակով, դրանով հանդերձ մեր ընթերցողները շատ կը սիրէին առաւել իմանալ Ձեր մասին:

**Պ.-** Ծնել եմ Բէլյոսի մէջ, կրթութիւնս ստացել եմ ամերիկեան համալսարաններու մէջ, հետեւած եմ մանկավարժական անգլերէն լեզվի ուսուցման (մեթոդաբանական) մասնագիտութեամբ: Համալսարանական մի քանի վկայականներ ունեմ, նոյնիսկ դոկտորական կը պատրաստեմ Անգլիոյ համալսարանի մէջ:

ՀԲԸ միութեան կրթական յանձնախմբի մէջ մի քանի տարիներ աշխատանք տարած եմ՝ կամաւոր կերպով:

Նոյն աշխատանքը տարած եմ «Մելքոնեան» հաստատութիւնէն ներս՝ նախքան տնօրէն ընտրուիլս: 5-րդ տարւայ համար կը գնայ իմ պաշտօնիս ստանձնումը:

**«Լոյս».- Եթէ բարեհաճէք ասել, ի՞նչ առաքելութեամբ էք մեզ մօտ գտնուում, հրաւերով թէ՞ այցելութեան նպատակով:**

**Պ.-** Իրականութեան մէջ այցելութիւն մըն է այս, որ հիմնական երկու նպատակ կը հետապնդէ. առաջին՝ անհատապէս կապ հաստատել պարսկահայ գաղութի պատասխանատուներու հետ, դպրոցներու կեանքին ծանօթանալու համար: Նաեւ ծանօթացնել «Մելքոնեան» կրթական հաստատութեան հնարատրութիւնները եւ ի պահանջել հարկին մեր այստեղի ծնողներուն հետ հանդիպում ունենալ, եւ այլ հաւանական ծնողներու գոհացում տալ իրենց հարցերուն պատասխանելով:

**«Լոյս».- Խնդրեմ մեզ ասել, ո՞ր քականին է հիմնադրուել «Մելքոնեան» վարժարանը, ո՞ւմ բարերարութեամբ, ի՞նչ կարգի վարժարան է, ի՞նչ առարկաներ են դասաւանդուում եւ ի՞նչ միջոցով է քիւլջէն հայթայթուում:**

**Պ.-** «Մելքոնեան» կրթական հաստատութիւնը արդէն ասանդութիւն եւ պատմութիւն ունեցող հաստատութիւն մըն է: Գիտէք, եկող տարեշրջանին մենք արդէն «Մելքոնեան» հաստատութեան 75 ամեանկը պիտի տօնենք: Հիմնուած է 1926-ին. այժմեական հարցերով զբաղւած կրթական հաստատութիւն մը եղած է, միշտ փորձած է տեղոյն պահանջներու համաձայն ճկունութիւնը ունենալ ներկայացնելով:

75 տարիներ առաջ դպրոցին առաքելութիւնը եղած է որբահաւաքը, սփիւռքի որբերը այդտեղ մէկտեղւած են կրթութեան եւ ապաստանի համար եւ ջերմութիւն ցուցաբերած են, այդ տողը հանդէպ:

Այս հաստատութիւնը իւրայատուկ հաստատութիւն մըն է, որովհետեւ հիմնուած է բարերարութեամբ Մելքոնեան եղբայրներու, որոնք իրենց ամբողջ կեանքի ընթացքին շատ ժուժկալ կեանք մը ապրելէ ետք՝ ապահոված են հաստատութիւն Եգիպտոսի մէջ եւ անդից ետքը հաստատած են Կիպրոս: Իրենց երազը եղած է միշտ նւիրել ազգին եւ այնպիսի ձեւով պատմութեան ներկայանալ, որ իրենց վրէժը լուծած ըլլան Թուրքիոյ դէմ, շատ դրական ձեւով զինելով մեր սերունդը կրթութեամբ:

Այդ օրերուն որբահաւաքն էր, որ պէտք էր: Երկու տասնամեակ ետք արդէն ճանաչւած երկրորդական վարժարան, այստեղի միջնակարգի մակարդակի վարժարան է, եւ ճանաչում ունեցած է Կիպրական կառավարութեան կողմէ: Հետզհետէ վերջին տասնամեակներին սփիւռքեան զանազան գաղութներէ աշակերտներ ընդունած է:

Դպրոցը իր առաքելութեան մէջ միշտ կը շարունակէ իր աշխատանքը եւ միշտ ճկունութիւն ցուցաբերած է ժամանակին հետ յարմարելով եւ միշտ վերանորոգելով իր աշխատանքը, իր ծրագիրները, որպէսզի կարենայ քայլ պահել տեղոյն սփիւռքահայ գաղութներու պահանջներուն եւ կը ձգտէ, որ միջազգային չափանիշներով պատրաստութիւն ստանան մեր աշակերտները, հայեցի կրթութիւն, հայեցի մթնոլորտի մէջ հայ լեզվի ու գրականութեան, ու պատմութեան ծանօթանալով եւ պատրաստուելով:

**«Լոյս».- Վարժարանը ո՞ր տարիներից է աշակերտ ընդունում եւ ներկայումս որքա՞ն է աշակերտութեան թիւը:**

## Մշակոյթ



**Պ.**- 11 տարեկանից է աշակերտ ընդունում: 200 աշակերտներ ունին՝ տարբեր գաղութներից, Իրանից՝ 3 աշակերտներ միայն, նախկինն ունեցած ենք շրջանաւարտներ:

**«Լոյս».**- Ուսման վճարումը իրանահայ աշակերտների համար ի՞նչ չափի է, արդե՞օք սան ընդու-

նում էք:

**Պ.**- Կեցութեան եւ բոլոր ուսումնական եւ այլ ծախսերը պարփակելով, շուրջ 5000 դոլար է տարեկան:

Եթէ գտնեն փայլուն եւ ընդունակ աշակերտներ, որ մեր մուտքի քննութեանց մէջ յաջողեն եւ ի վիճակի չլինեն, այսպիսի մէկերուն կը ընդունին որպէս սան կամ անվճար:

**«Լոյս».**- Ուսման ընթացքը քանի՞ տարի է, դասախօսները կիպրահայ գաղութից են, թե՞ այլ երկրներից էլ ներգրաւում են:

**Պ.**- 7 տարի է: Ներգրաւելու դէպքում պետութեան արտօնութեամբ պէտք է ըլլայ:

**«Լոյս».**- Դպրոցի տնօրինութեան կապը Հայաստան-Սփիւռք կոմիտէի հետ ի՞նչ մակարդակի է, անշուշտ մշակութային առումով՝ դասագրքերի եւ հայագէտ դասախօսների հրատարակման տեսակէտից:

**Պ.**- Մենք գիտենք, որ դասագրքերի հարցը շատ լուրջ եւ նուրբ հարց է ընդհանրապէս, թէ հայրենիքի մէջ եւ թէ հայրենիքէն դուրս. մենք դժբախտաբար դասագրքերու պատրաստութեան մէջ տակաւին նախնական քայլեր են, որ կառնինք, որ պիտի արժեւորենք զայն միջազգային կափարակներով: Անոր համար է, որ անպայմանօրէն պէտք է սփիւռք-հայրենիք համագործակցութիւն ըլլայ, պէտք է դպրոցական կապեր հաստատուին, փոխանակումներ ըլլան փորձառութիւններու եւ մեր մօտ մասնագէտները, մարդուժը եւ փորձառութիւնը չի պակսիր, ինչ որ կը պակսի ծրագրաւորումը եւ աշխատանքի համադրումն է:

**«Լոյս».**- Խնդրեմ տեղեկութիւններ տալ կիպրահայ գաղութի մասին:

**Պ.**- Կիպրահայ գաղութը, ուրախ եմ ըսելու, թէ հայաստան գաղութ է դարձեալ եւ 2000 թիւ կը ներկայացնէ, անշուշտ փոքր երկիր ալ է Կիպրոսը: Մեզ մօտ Կիպրոսէն ունինք շուրջ 45 աշակերտներ, որոնց կէսէն քիչ մը աւելին հագիւ կը մնան կիպրահայ, ուրիշներ Կիպրոսի մէջ բնակող ընտանիքներուն զաւակներն են: Բաւական բարեկեցիկ, հայրենասէր եւ հիւրընկալ գաղութ մըն է: Կրնամ ըսել, թէ Կիպրոսին մէջ «Մելքոնեան» հաստատութիւնը միշտ նպաստած է գաղութի մշակութային կեանքին եւ «Մելքոնեան»-ի պատճառաւ է, որ Կիպրոսի հայ գաղութը աւելի ինքնավստահ եւ աւելի զօրաւոր կը զգայ իրեն, փոխադարձաբար հաստատութիւնն ալ նոյնպէս՝ հանգիստ, բախտաւոր եւ ուրախ է, թէ այնտեղ

գաղութ մը կայ իր կողքին, անապատին մը մէջ չէ, օտար միջավայրուն մէջ չէ:


Կիպրական կառավարութիւնը նոյնպէս շատ բարիացկամ է, շատ լաւ դրական կեցածք ունի եւ հոգատար հետաքրքրութիւն ցոյց կը տայ դպրոցին հանդէպ:

**«Լոյս».**- Թեմական մարմիններ ունե՞ք, ո՞վ է ներկայիս Առաջնորդը:

**Պ.**- Անշուշտ Թեմական եւ ազգային այլ մարմիններ գոյութիւն ունին: Ներկայիս Առաջնորդն է՝ Տ. Վարուժան Եպիս. Հերկելեանը:

**«Լոյս».**- Ի՞նչ պատկերացում ունե՞ք մեր իրանահայ գաղութի մասին, կրթական, մշակութային եւ հասարակական դիտանկիւնից: Գիտեմ կարճ ժամանակամիջոցում դժուար թէ կարելի լինի լաւ գաղափար կազմել, ամենայնդէպս, այն ինչ Ձեր մտապատկերում կայ:

**Պ.**- Չզալի է հիմնական գաղութի մէջ տնտեսական վիճակի փոփոխութիւնը, ուրիշ կողմէ արտագաղթի դժարութիւնները յարուցած գաղութէն ներս եւ այլ խնդիրներ,



որոնք ազդեցութիւն թողած են հայոց դպրոցների, հայեցի կրթութեան ցանցին վրայ:

Պէտք է ըսել, որովհետեւ հայաստան գաղութ է, բաւականին տոկացած է մինչեւ հիմա՝ ուսումնական գետնի վրայ: Մի քանի անձերու հետ որ գրուցեցի, կը նկատուի, թէ այնտեղ ցաւ կը յայտնին, թէ պէտք եղած պատրաստութիւն չեն կրնար տալ դպրոցներէն ներս եւ այդ մէկը վստահ եմ, մտահոգութիւնը բոլորինն է, բայց եւ այնպէս կրթական ցանցը, մակարդակը, պետական ծրագիրը ինչ որ է, այն է, եւ վստահ եմ, թէ արտադասարանային, ակումբային, երիտասարդական, պատանեական աշխատանքներով կարելի է որոշ չափով լրացնել այդ բացը, որ ինքնաբերաբար կրթական կառոյցը կը պարտադրէ:

**«Լոյս».**- Խորին շնորհակալութիւն, որ Ձեր ժամանակը յատկացրեցիք մեզ եւ համբերութեամբ պատասխանեցիք մեր հարցերին, բարի երթ եւ ամենայն բարիք: ■

*Թղթակից՝ Ռ. Կորիւն*

# ՓՐԿԷՔ ՁԵՐ ԿԵԱՆՔԸ ՏԱՐՐԱԿԱՆ ՄԻ ՏԵՍՏՈՎ

**Գրեց՝ Ը. Սաքնամարա  
Թարգմանեց՝  
Վիոլետ Զուակիսը (Էլշիշեան)**

«Թարգմանիչը սոյն յօդուածը նւիրում է երիկամների ցանկից տառապած Արամայիս Շիրզադիի անմահ յիշատակին»




Օր. Բարբարա Բիթները՝ իր կեանքի ընթացքում, այսպիսի մեծ ոգևորություն չէր ապրել, ինչպես որ եղաւ 22 տարեկանում, երբ նա մի պետական կազմակերպութեան մէջ ստանձնեց մի շատ կարեւոր պաշտօն: Այս պաշտօնին հասնելու համար նա անցաւ բազում փորձութիւններ, երբ բազմաթիւ դիմողներից, հարցազրոյցի միջոցով, ընտրուեց միայն ինքը: Միայն թէ, աշխատանքի անցնելու համար պէտք է անցնէր որոշ բժշկական քննութիւններ: Արեան քննութիւնից յետոյ ինչ որ կասկածելի նշաններ չի յայտ եկան եւ բժիշկները նրան խորհուրդ տուցին դիմել ընտանեկան բժշկին: Ի վերջոյ պարզեց, որ նրա երիկամները միայն 30%-ով են աշխատում, եւ իր վիճակը չափազանց լուրջ է: Բարբարան անակկալի հանդիպեց, քանզի երբեք որեւէ ցաւ կամ այլ անհանգստացնող երեւոյթներ չէր ունեցել մարմնի այդ մասերում: Դժբախտաբար երիկամների հիւանդութիւն ունեցող մարդիկ սկզբնական շրջանում ոչ մի անհանգրատացնող նշաններ չեն ունենում, այնքան ժամանակ մինչեւ որ երիկամները ընդհանրապէս շարքից դուրս են գալիս: Նա տարիների ընթացքում որեւէ ուշադրութիւն չէր դարձրել կասկածելի նշաններին: Առաջին նշանը արեան մէջ պրոտէինի առկայութիւնն էր եւ երկրորդը՝ բարձր արեան ճնշումը:

Այժմ Բարբարան անելի շատ մտահոգեց իր առողջական վիճակի, քան թէ ձեռք բերած պաշտօնը կորցնելու համար:

Երկու տարի անց նրա երիկամները ամբողջովին դադարեցրեցին իրենց գործունեութիւնը, եւ նա ստիպւած եղաւ տանը դիալիզ անելու: Ամէն գիշեր դիալիզի սարքից խողովակը միանում էր նրա երակին եւ 8 ժամայ ընթացքում գտում էր նրա արիւնը: Այս պրոցեսը շարունակեց այնքան ժամանակ, մինչեւ որ ստիպւած եղան նոր երիկամ տեղադրելու: Բարեբախտաբար այժմ նա կանոնաւոր ձեւով մարզանք է անում եւ համեմատաբար անելի առողջ է զգում իրեն: Հիմա նա հաւատացած ասում է, որ առողջութիւնը իսկապէս աստածային մի պարգեւ է մարդ արարածին, որը պէտք է այն իսկապէս արժէքաւորի:

Մէկ լաւ լուր եւս, հիմա վերոյիշեալ այստորոշման համար, տանը հնարու է դարձել մէզի քննութիւն անցկացնել: Այս նպատակով շատ կարեւոր է հաշի առնել հետեւեալը:



## Վտանգի անձայն սպառնալիք

Շատ կարեւոր հանգամանք է՝ ծանօթանալ երիկամների գործունեութեան հետ:



Երկու լոբու նման անդամներ են դրանք, ամէն մէկը մի բռունցքի չափով: Նրանք մարդու օրգանիզմում կատարում են շատ կարեւոր Ֆունկցիա, այն է՝ զտողականութիւնը: Նրանք օրայ մէջ մօտ 200 լիտրի չափով արիւն են զտում, որից 2 լիտր ուղարկում է միզափամփուշտ օրգանիզմից դուրս մղելու նպատակով:

Ընդհանրապէս երիկամների հիւանդութեան դէպքում, արեան գտնան պրոցեսը օրգանիզմում թուլանում է, որի հետեւանքով մարդու մարմինը թունաւորում է:

Երիկամների հիւանդութեան այստորոշման կարեւոր նշաններից մէկը՝ արեան մէջ եղած աւելորդ պրոտէինն է, եւ օրգանիզմից մէզի միջոցով մղող աւելորդ արտադրութիւնները: Ինչպէս արդէն վերը նշեց երիկամները կատարում են մարդու մարմնի համար կենսական նշանակութիւն ունեցող Ֆունկցիաներ: Եւ եթէ վնասում է երիկամը, ապա վնասում է մարդու ողջ օրգանիզմը: Երիկամները կծկւում են եւ մարդու արեան ճնշումը բարձրանում է: Երիկամների անկանոն աշխատանքը վնաս է հասցնում նաեւ մարդու ուղեղին եւ մկաններին, ինչի հետեւանքով առաջանում է արիւն առատութիւն, ոսկորները փլուրուն են դառնում, քանի որ երիկամը անընդունակ է դառնում Ֆոսֆոր արտադրելու մէջ: Սա էլ իր հերթին բերում է արեան մէջ կալցիումի մակարդակի բարձրացում: Իհարկէ մարդու օրգանիզմը արտադրում է որոշ հորմոններ, որոնք այդ կալցիումի պակասը լրացնում են, սակայն դրանք աներեւակայելիօրէն թուլացնում են ոսկորները: Պէտք է նշել նաեւ հետեւեալը, որ ընդհանրապէս մարդը մէկ երիկամով էլ ապրում է:

Մօտ 15 միլիոն ամերիկացիներ տեղեակ չեն իրենց արեան մէջ պրոտէինի բարձր տոկոսի առկայութեան մասին: Եւ մօտ 350.000 ամերիկացիներ իրենց կեանքը փրկում են՝ նոր երիկամների տեղադրման միջոցով: Ամէն տարի 75.000 հոգի աւելանում են այդ քանակին, որը կազմում է բնակչութեան 7-8 տոկոսը:

Պարզել է, որ եթէ ժամանակին յայտնաբերեն երիկամների հիւանդութեան այստանշանները, ապա կարելի է կանխել դրա զարգացումը:

Մի շատ հասարակ, մատչելի եւ հեշտ միջոց կայ մէզը քննելու համար: Դա բժշկական յատուկ տեստ է, որ դրում է մէկ բաժակ մէզի մէջ: Եթէ այն գոյնը փոխում է, ապա նշանակում է, որ պրոտէինի բարձր տոկոսի առկայութիւն կայ: ■

*Ճար. տեսնել էջ 2-ում*

ՖՈՒՏԲՈՒԼԻ ԸԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ



ԱՆԳԼԻԱ- Ժամանակակից Ֆուտբոլի հայրենիքը: Ֆուտբոլային միութիւնն ըստեղծել է 1863թ.: ՖԻՖԱ-ի անդամ՝ 1905-20թթ., 1924-28 եւ 1946-ից: Խոշորագոյն մարզադաշտը «Ուեմբլի» (Լոնդոն)՝ 97.000: Երկրում կայ 2.250.000 Ֆուտբոլիստ, որից 5000-ը արհեստավարժ: Անգլիայի հաւաքականը (մարզագոյն տարի սպիտակ մարզաշապիկ, մուգ կապոյտ վարտիք, սպիտակ կապոյտ զանգապաններ) 1966թ. աշխարհի, 1908 եւ 1912թթ. օլիմպիական չեմպիոն է: Անգլիական Ֆուտբոլին բնորոշ են առլետիզմը, երկար փոխանցումները, գլխով հմուտ խաղը:

Առաջատար ակումբներն են «Մանչեստեր Իւնայթեդը», «Լիվերպոլը», «Էտերտոնը», «Նոթինգհեմ Ֆորեսթը», «Մատոն Վիլան», «Արսենալը»: Լաւագոյն խաղացողները՝ Սեփուզ, Բեսթին, Բասթի, Դոլչը, Լաուրոն, Ռայթ, Ֆիննէյ, Գրիվս, Շիլտոն, Ֆրենսիս, Լինքեր եւ ուրիշներ: Լաւագոյն մարզիչները՝ Չեպմեն, Ուիմտերբորոն, Ռանսէյ, Ռեյլի, Ռոքսոն եւ ուրիշներ:




«ԱՆԴԵՆԵՆԹ» (Բրիսեյ)- Ակումբը հիմնել է 1908թ.: Մարզադաշտը՝ «Ատարիդ պարկ» (38.000): Եւրոպայի գաւաթակիրների (1976,1978), ՈՒԵՖԱ-ի (1983) եւ վերնագաւաթի (1976,1978) գաւաթակիր, Բելգիայի բազմակի չեմպիոն ու գաւաթակիր: Լաւագոյն խաղացողները՝ Վան Հինսթ, Թ.Նորդալ, Ռենսենբրիկ, Համան, Օլսէն, Վերկուտերեն, Չեռնեստիսկի, Դեգրիս, Օլիվերես, Վան Տիգելեն եւ ուրիշներ:

ԱՆԴՐԵԱՍԵԱՆ ԱՐԿԱՂԻ (ծնւ. 1947թ.)- Կիսապաշտպան: Միջազգային կարգի սպորտի վարպետ: Բարձրակարգ տեխնիկայի տեր, տակտիկական ճկուն մտածողութեամբ եւ նուրբ դիտողականութեամբ Ֆուտբոլիստ, խաբսի եւ փոխանցման վարպետ, խաղի հմուտ կազմակերպիչ, դիպուկ հարւածող: Լաւագոյններից մէկը հայկական Ֆուտբոլում: 1969-78թթ. Երեւանի «Արարատի» կազմում հանդես է եկել ԽՍՀՄ առաջնութեան բարձրագոյն խմբում: Անցկացրել է 242 խաղ, խփել 61 գոլ: Օլիմպիական խաղերի բրոնզէ մեդալակիր (1972), 1973թ. ԽՍՀՄ չեմպիոն, 1971 եւ 1976 (գարնանային)թթ. առաջնութիւնների արծաթ մեդալակիր, 1973 եւ 1975թթ. ԽՍՀՄ գաւաթակիր: 1972-75թթ. ԽՍՀՄ գլխաւոր հաւաքականի անդամ, մասնակցել է 12 խաղի, խփել 1 գոլ: 1969-72թթ. հանդես է եկել ԽՍՀՄ օլիմպիական հաւաքականում, մասնակցել է 10 խաղի, խփել 4 գոլ: ԽՍՀՄ 1976թ. գարնանային առաջնութեան լաւագոյն ռմբարկու (8 գոլ): Մրցելոյթներն աւարտելով՝ որպէս գլխաւոր մարզիչ աշխատել է Արովեսանի «Կոտայքում» (1979-81), Երեւանի «Արարատում» (1982-83 եւ 1986-89, քիմի լաւագոյն արդիւնքը՝ 5-րդ տեղ), Հոկտեմբերեանի «Մպարտականում» (1984-85) եւ ՀՀ առաջնութեան մասնակից Էջմիածնի «Զարթոնցում» (1992-93): Ներկայումս աշխատում է Լիբանանում: Հայաստանի վաստակաւոր մարզիչ: ■



ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ



Շարք.- Կը խնդրեմ ներկայանալ:

Պատասխան.- Ժիլբերտ Թորոսեան, 24 տարեկան: Զբաղում եմ «Ֆուլկոնտակտ» մարզածելով:

Շ.- Կը խնդրենք որոշ տեղեկութիւններ տալ տւեալ մարզածելի վերաբերեալ:

Պ.- Այս մարզածելը երկու հիմնական մասերից է բաղկացած, մէկը՝ ձեռքերի օգտագործումն է, որ 50 տոկոսն է կազմում, իսկ մնացած 50 տոկոսն էլ ոտքերի օգտագործումն է: Ձեռքերի բաժինը մնանում է բռնցկամարտի, իսկ ոտքերի բաժինը տեկվանդոյին: Ունի երեք կարգի մրցելու ձեւեր.

«Սեմի կոնտակտ», որ աւելի ցածր մակարդակի վրայ է կանգնած:

«Նանօ կոնտակտ», որ միջին մակարդակի վրայ է:

«Ֆուլ կոնտակտ», որ ամենաբարձր մակարդակն է ներկայացնում:

Շ.- Ո՞ր քիմում էք մարզել, եւ ի՞նչ կարգի էք արժանացել:

Պ.- «Նայիրի» միութեան քիմում եմ եղել, իսկ հիմա նոյն տեղում աշխատում եմ որպէս օժանդակ մարզիչ: Մեզ գօտի եմ, «դան 1»:

Շ.- Ո՞վքեր են եղել Ձեր մարզիչները:

Պ.-Պրն. Սեմսի Ռոբերտը, պրն. Ֆարիատ Գորդարը, եւ պրն. Գարիշը:

Շ.- Ո՞ր տարիքից էք մարզել:

Պ.- 16 տարեկանից:

Շ.- Այս մարզածելի դրական կողմերը որո՞նք են:

Պ.- Ներառային համակարգի հանգստացումը, կամքի ուժի կոփումը, վճռականութեան ձեռքբերումը եւ, որ ամենից կարեւորն է մարդուն ծանօթացնում է իր մարմնի անդամների ունակութիւններին:

Շ.- Այս մարզածելում եղած մարզիչներից որո՞նք էք համարում օրինակելի:

Պ.- Ֆարիտի եւ Ֆարիատ Գորդարիին, սրանք երկուսն էլ Իրանում չեմպիոն են:

Շ.- Ի՞նչ մրցոյթների էք մասնակցել եւ ի՞նչ նւաճումներ ունեցել:

Պ.- Երկու անգամ մասնակցել եմ համահայկական բռնցկամարտի մրցոյթներին եւ երկու անգամն էլ երկրորդ տեղն եմ գրաւել: Մասնակցել եմ նաեւ համաիրանական մրցոյթներին, ուր մեր քիմը, որը բաղկացած էր 5 հոգուց երրորդ տեղը գրաւեց:

Շ.- Ի՞նչ կը ցանկանայիք մեր համայնքի երիտասարդութեանը:

Պ.- Տես խորհուրդ կը տայի միայն, որպէսզի մեր երիտասարդութիւնը անպայմանօրէն զբաղի մարզանքով, եւ մասնատրապէս իմ կողմից հրաւիրում են նրանց՝ մասնակցելու մեր միութեան փորձերին: ■

Շարքագրոյցը վարեց՝ Առլետ Վարդումեանը

# ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 6

Կազմեց՝  
Գագիկ Անդրեասեանը

## Շորիզոնական

1. Հայոց պատմահայրը:
2. Հայաստանի հին թագաւորութիւն-ներից - ընդարձակ:
3. Աջից հողը վարելու գործիք- 1918 թ. հերոսամարտի վայրերից մէկը:
4. Անաւարտ ատամ - թերթ - ասեղով ու թելով է կատարում:
5. Շրջապատը փայտով ծածկելու միջոց - շատ - հիմա:
6. Էզգենա - ցուցական դերանուն:
7. Իգական անուն - թռչունի տեսակ- արական անուն:
8. Շատ - ցուցական դերանուն- հայոց լեռներից:
9. 1918 թ. հերոսամարտերի վայրերից միւսը
10. Անօթ - մէկ - աջից կարող, ընդունակ - տարի:
11. Գիծ - աղելի մէջ է դրում - Հայաստանի ժամանակակից բանաստեղծներից:
12. Վեցերորդ նոտան - զրադաշտական քուրմ - կրկնած ձայնաւոր - կենդանու տեսակ:
13. Արական անուն - աջից մարմնի ոսկորների կազմը - ցուցական դերանուն:
14. Ցուցական դերանուն - իգական անուն:
15. Հայ մեծանուն դրամատուրգ, որի ծննդեան 175 - ամեակը վերջերս տօնեց - երագ, տեսիլք:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															

## Ուղղահայեաց

1. Հայ մեծանուն վիպասան- ամէն ձեռք ունի- բաժին:
2. Թնդալ- թմրադեղի սովոր:
3. Կասկածել - Չարենցի գրական գործերից:
4. Հոլոված դերանուն- բառնալ:
5. Անգլոլիս կէտ - երկաթը իր կողմն է քաշում- ես գնում... - դերանուն է:
6. Կարճ, քիչ, նեղ - խառն ապի - տարի - յատկութիւն:
7. Կրկնած ձայնաւոր - եղէգնափող:
8. Ցածից լիագօր - թռչունի տեսակ - ցածից՝ խօսք:
9. Չախ չէ- դերանուն է - գործողութիւն:
10. Ճանապարհ - անաւարտ լար - հոլոված դերանուն - մուգ կարմիր:
11. «Երկիր...», Չարենցի գրածքներից - յանկարծակի, չնախատեսւած:
12. Ուրիշ - պատմական Հայաստանի նահանգներից:
13. Խառն կացին:
14. Բարձր հողակոյտ - արական անուն:
15. Հայ մեծանուն արձակագիր - մէկ գիծ:

ԼՈՒԾԵՐ  
ԽԱՉԲԱՌԸ

ՍՏԱՅԵ  
ՆԷՐ

Խաչբառ համար 5-ի  
լուծւած տարբերակը  
տեսնել էջ 11-ում:



# ՕԳՈՍՏՈՍ

Դասական գրաբարում գրում է *Աւգոստոս* եւ կարդացում *Աուգոստոս*: Կապում է հռոմէական Augustus, Օգոստոս կայսեր անուն հետ. ապրել է մ.թ.ա. 63-ից մ.թ.14-ը, գահակալել մ.թ.ա. 27-ից մ.թ.14-ը:

Սա եղել է Յուլիոս Կեսարի երրորդ պորտի զարմիկը եւ մինչեւ մ.թ.ա. 44-ը աազանի անունով կոչել է Caius Octavius: 44-ին, երբ որդեգրել է Յուլիոս Կեսարի կողմից, կնքել է Caius Julius Caesar Octavianus անունով եւ միայն կայսերական գահ բարձրանալուց յետոյ է ստացել Յեզար *Աուգոստոս* տիտղոսը:

Այս Օգոստոս կայսրին նոյնպէս, ինչպէս որ Յուլիոս Կեսարին, ժամանակին աստուածացրել են: Որովհետեւ կատարել է նշանաւոր գործեր. մ.թ.ա. 30-ին նաճել է Եգիպտոսը, 31-ին ջախջախել Մարկոս Անտոնիոսի նաւատորմը, Հռոմէական Կայսրութեան սահմանները արեւմուտքում հասցրել է Հիսպանիան Իսպանիա, արեւելքում՝ մինչեւ մերձդանուբեան տարածքները: Իր տիրակալութեան անունը դրել է «հանրապետութիւն», բայց իրականում, ինչպէս մ.թ.ա. 2-րդ-1-ին դարերի միւս տիրակալները, եղել է իսկական միահեծան կայսր ու բռնակալ: ■



## Հումոր

⇒ Մէկը դիմում է իր ընկերոջը.  
- Այսօր կնոջս ծննդեան օրն է, խնդրում եմ ասա, թէ ի՞նչ նւէր գնեմ:

- Աւելի լաւ է՝ հարցնես կնոջիցը:
- Ես այդքան փող չունեմ:

⇒ Մի մարդ քայլում է փողոցով և ծափահարում:

- Ինչո՞ւ եք հենց այնպէս ծափահարում,- հարցնում է անցորդներից մէկը:

- Իսկ ո՞վ ասաց, որ հենց այնպէս եմ ծափահարում, - պատասխանում է ծափահարողը,- ես կոկորդիլոսներին եմ հեռացնում:

- Մեր շուրջը ոչ մի կոկորդիլոս էլ չկայ:
- Եթէ հեռացրել եմ, պարզ է, որ չի լինի:

⇒ Ռեստորանում հաճախորդը կերակրացանկին ծանօթանալուց յետոյ դիմում է մատուցողին.

- Խնդրում եմ մէկ բաժին ուղղագրական սխալ բերէք:

- Ներեցէք, պարոն, ռեստորանում նման կերակրատեսակ չկայ:
- Բա կերակրացանկում ինչո՞ւ է այդքան շատ:



## Ասացածքներ

- \* Ամէն մարդու համար իր տունը պալատ է:
- \* Համբերութիւնը դառն է, պտուղները քաղցր:



## ԱՖորիզմ

\* Որևէ մէկի յատկանիշը գնահատելու համար հարկաւոր է այդ յատկանիշի որոշ մասն ունենալ նաև իր մէջ:

### Վ. Ծեքսպիր



## Հանելուկ


Այն ինչ ծառ է չորս ճիւղանի, որ յենաւած է մէկ սեղանի:

Ուղղակի խոսքով ուս՞ դ ցվմոց

(Այս հանելուկը ստացել ենք պրն. Երւանդ Գրիգորեանից):

## Ամենաերկար նրբերշիկը (Մոսիս)

Անգլիայի Բիրմենգհամ քաղաքում, մի նրբերշիկ արտադրող պատրաստել է 9 կիլոմետր երկարութիւն ունեցող նրբերշիկ, որը 87000 անգամ մեծ է սովորական նրբերշիկից:



## Աչքեր

Գլխի ենթաճակատային մասում աչքի են ընկնում աչքերը, որոնք լինում են սև ու կապոյտ, խաժ ու կանաչ, մեղաւոր ու անմեղ, չար ու բարի, ուրախ ու տխուր, կուշտ ու ծակ, բնական ու ներկած:

Աչքերին անբացատրելի հմայք են պարզեւոր երկար ու գեղեցիկ թարթիչները, որոնց մէկ կոմպլեկտն արժէ քանի հազար թուման:

# « Արեւիկ, Արեւիկ... ես Ծովագարդն եմ »

( Կես լուրջ կես կատակ ռեպորտաժ գիտարշարանից )



(Ակիւբը նախորդ համարում)

Պրոֆ. Ռ. Ա. Ղազարեան

Վերջապէս յաղորդակէտի համար Ծովագարդի մօտ ընտրում ենք կիսաքանդ ամբոցի նմանող երբեմնի ստորջրէայ մի քարափ, ընդունման կէտի համար «Արեւիկ» մանկական ճամբարին կից, կիսակառոյց մի շէնք: Առաստաղն ու պատերը կան, ուրիշ բան պէտք չէ:

Ձանգահարում են Մոսկա: Ռադիօկայի վերաբերեալ մեր խնդրագիրը ստացւած է, պատասխանը՝ համաձայն ընդունւած կանոնի՝ մէկ ամիս անց: Ծաղրում է՞ք, ի՞նչ է,- մէկ ամիս անց գիտարշարը ւարտւելու վրայ կը լինի: ...Հէնտախօսով «ընկնում են ոտքերը, աղաչանք-պաղատանք անում»: Խոստանում են թոյլտուութիւնը հեռագրով տալ: Քիչ է մնում իրօք արտասւեմ՝ այս անգամ ուրախութիւնից: Ներգրաւելով Գիտութիւնների Ակադեմիայի Նախագահութիւնը, փորձում ենք յաջողացնել մերձակայ օրեկաններից սնելու հարցը և ամենուրեք մերժում: Գիտարշարախըմքի համար մեքենան ինստիտուտն է մերժում՝ չունի: Ձանգահարում է Գուրիչը՝ տրէյլերը և մի խումբ մոսկուացիներ արդէն ճամփայ են ընկել, 4-5 օրից կը լինեն Սևանում: Լեղապատառ ինձ գցում են տնտեսական գծով տեղակալի մօտ:

-Նիկոլայ Ստեփանիչ, սիրելիս, յունիսի 28-ին չէ՞ քո ժամակէտը... համարի 31-ին պատրաստ է:

-Յունիսը 30 օր է...: Վազում են գլխաւոր ինժեների մօտ:

-Միհրան ջան, Էլեկտրասնման հարցը...

-Ընկեր Ղազարեան, ես երբեւէ ամօթով թողե՞լ եմ...

Յուլիսի 1- Շինանիւթով սպառնալից գերբեռնւած մեքենան քարշ գալով շարժում է Աշտարակից Սևան: Ծանապարհին կորչում է: Վատ նախագագացումով համակւած, Նիկոլայ Ստեփանովիչի հետ մի քանի անգամ չափում ենք Աշտարակ-Սևան երթուղու հնարաւոր ուղեծրերը, յետոյ յուսահատ գալիս Ծովագարդ... և շարած դէմ ենք առնում պատրաստի կանգնած փայտաշէն լաբորատորիային: Փոքր-ինչ հեռում թառել է կոկիկ մի գուգարան: Էլեկտրաքոտը եւ կախւած է ինքնաշէն սիւներից: Համոզւած եմ, որ առանց կախարական գաւազանի եօլայ չեն գնացել: Մեր ուրախութիւնը թանկ է նստում հարևանի ոչխարներից մէկին:

Յուլիսի 2- Ռադիօկայի թոյլտուութիւնը դեռ չի ուղարկւած: Նորից բարձրաձայն «ձեկեկում» են ու մտո-

վի շարուն եռայարկ բազմակէտ: Խոստանում են արագացնել:

Յուլիսի 5- Սարքաւորումով տրէյլերը և Գ.Ա.Ձ-51-ով 8 մասնակից ժամանում են «Արեւիկ»: Աչքս լոյս... հիւրերը գործիմացօրէն կախում են դռները, կահաւորում ճաշասենեակը, շարուն գործիքները, եփում ճաշեր և որոնում եռաՖազ ցանցի գրօն. կորել է: Վերջացել է հեղուկ ազօտը: Ռադիօկայի թոյլտուութիւնը դեռ չկայ: Մի խօսքով եօթյարկանի մի բազմակէտ: Վերադառնում են Ծովագարդ: Տեղատարափ անձրև է, դեկտեմբերեան ցուրտ՝ երևում է արտաշնչող գոլորշին: Կապարտ լիճ, կապարտ երկինք, սառը քամին հասցրնում է միւս ափից՝ «Մեր բանը չէր...»:

Յուլիսի 8- Ազօտ բերելու գնում են մոսկուացիների գազիկով: Վարորդը՝ Շուրիկը հետաքրքրասէր է ու մարդամօտ: Լսելով Ախթամարի արանդութիւնը լուրջ մտահոգում է. « Վայ թէ քամին է հանգցրել ջահը՝ գիտես էլի, ամէն ինչ պատահում է »: Յանկարծ մի նոր կասկած է ծնում՝ «չլինի՞ ուրիշի հետ էր թրեւ գալիս, մինչ տղէն լողալով գալիս էր...»: Կասկածը դառնում է համոզմունք և գայրոյթ. « Էդ տեսակ աղջկայ համար զոհեց ջահէլը, իսկ ինքը, երևի, մինչև հիմա էլ սալրում է »:

Յուլիսի 9- Տես յուլիսի 1-ից 8-ը, այն տարբերութեամբ, որ բազմակէտերն են երկարում...:

Հաւաքել են գիտարշարի բոլոր մասնակիցները, նրանց թում Երևանի համալսարանի մի քանի ուսանող: Չեն գտնում՝ եռաՖազի գրօն և Գուրիչի ճամպրուկը: Առաքում ենք հեռագրեր Մոսկա, Յիւլեանսկ, տուն: Չկայ, կորել է: Մաս ենք հանում նրան տաք հագուստեղէնից, քանի որ ցուրտը շարունակւում է:

Փառք ամենագօրին, թոյլտուութիւնը եկել է: Վերջապէս ռադիօկայանները բառնալով, լցում ենք Գ.Ա.Ձ-51-ի թափքը՝ Երևանեան տապից փախչելու տենչով:

Սկզբում բարեխղճօրէն ենթարկւում ենք ռադիօկայի բոլոր կանոններին, այն է՝ ոչ մի անձնական անուն. « Ծովագարդ, Ծովագարդ, ես Արեւիկին եմ, խնդրում են կանչէք համար առաջինին, ընդունում »:

Մի քանի օր անց.

-Վոլոդեա, ինչո՞ւ չէիք պատասխանում:

-Ճառագայթն էի դզմում:

-Բա Անդոն ի՞նչ էր անում:

-Գնացել էր հարեւանից էշ խնդրի, լճից ջուր բարձրացնենք սառեցման համար:

Մի հոգս ես, պոմպերը չգործարկւեցին՝ զիւղական էլեկտրացանցը սակաւազօր է: Մտիպւած պայմանագիր պիտի կազմեն էշի հետ: Յոյսով են դրա սկիզբը դնողը ես չեմ:

Յուլիսի 27- Ենթակարմիրը կարծես քեթեւակի ուշքի է գալիս: Համենայն դէպս աշխատել կարելի է: Միայն թէ դիմամայ մի 10 օր: Դէհ, առաւօտեան սկսում ենք: Հետաքրքիր է այս անգամ ի՞նչը կը խանգարի: Զնելուց առաջ մըմնջում են « Հայր մեր »-ը:

Յուլիսի 28-Նորից ընկնում է ենթակարմիր հզօրութիւնը: Մոլեգնած մի քանի հոգով մագլցում ենք մօտակայ սարը և սահմանում ճամբարային ռեկորդ: Երե-



## Երիտասարդի համար

կոյեան ամեն ինչ կարգաւորում է . տուրբուլենտութիւնն էլ է աճում: Տալիս ենք փորձնական ազդանշանը: Աւաղ... «քմահաճում է» ընտրողունակ վոլտմետրը՝ ներառում է 50 հերց յաճախութեան խանգարող ազդանշան: Մինչև գիշերայ 2-ը փորփորում ենք, յետոյ փոխում 2 վոլտմետրերի սնման բլոկների տեղերը՝ 50 հերցը չքանում է: Ո՞նց չասես...: Տղաները Ֆիզիկական և յատկապէս, նետրոյային ուժերի վերջնագծին են հասել: Յուլիսի 31- Ամեն ինչ նորմալ է, բացարձակապէս ամեն ինչ: Եթէ կրկնի երեկայ եղանակը, ապա ժամը 16-ի կողմերը տուրբուլենտութիւնը կաճի և քամին, ինչպէս և պահանջում է, կը փչի լայնական ուղղութեամբ: Ժամը 13,30: Սկսում ենք...Տղաներից մէկը (կարեւոր չէ, թէ ով, նրա տեղը կարող էր լինել մեզինց իւրաքանչիւրը ) յուզմունքից շփոթում է սինխրոնտեկտորի (ընդունիչի) սնման բեւեռները և վերջինի միջից ծուխ է բարձրանում: Դա միակն է, գիտարշաւի համար յատուկ պատրաստել է Գուրիչի աշխատակիցներից մէկը, որը հիմա Մոսկայում է: Այսինքն՝ վերջ: Հազիւ կենդանի գուրիչը գերեզմանային լռութեան մէջ բացում է սլեսման: Բռայներ են անցնում, մինչև որ գիտակցում ենք՝ այս անգամ էլ փրկած ենք, վառել է ապահովիչ կոնդենսատորը: Լարւածութիւնը լիցքաթափում է հիստերիկ քրքիջով: Այդ միջոցին ընկնում է քանու արագութիւնը:

-Խնդրում են հաղորդէք քանու արագութիւնը,- ռադիո՞յով հարցնում է մոսկւացի Վալոդեա Պոկասովը «Արեւիկից»:

«Նոյ », - արձագանքում է Վոլոդեա Ջուլիակեանը Ծովագարդից:

Չբո,- դիմելով մոսկւացիներին, տխուր թարգմանում է Պոկասովը:

Օգոստոսի 1- 9 անց 30 է: Նոյն պատկերը: Մինչդեռ ամեն ինչ սարքին է:

Ոչ, չենք հաւատում այքներիս: Այո՞ւնայի գործիքի սլաքը հաստատակամօրէն մագլցում է վեր, կը նշանակի տուրբուլենտութիւնը աճում է, իսկ լայնական քամին բերում է արեւերի տաքութիւնը:

-Բոլորդ վերեւ, շո՛ւտ արեք,- գոռում է սովորաբար գուսպ Գուրիչը: Կարենն ու Ալիկը տենդագին լցնում են հեղուկ ազօտը Ֆոտոընդունիչների մէջ և գործի դնում վակուումային պոմպերը: Վոլոդեան և Անդրիկը այնտեղ՝ Ծովագարդում ուղղորդում են ճառագայթները: Այո՞ւնայ ինչպէս միշտ, անվրդով է և պատրաստ: Ահա, այն երջանիկ պահը, յանուն որի այրքան տառապել ենք: Կչկչում է յաճախութիւնները վերլուծող սպեկտրաչափի տալոդ սարքը, բզգում են Կաշկարովի պերճորատորները և Լոնսաճէի մագնիսագրառող սարքը, խուլ գուռն է շէլՖայի սուցիլոգրաֆը, մանր թրխաթրխում են վակուում-պոմպերը...: Աստուածային սիմֆոնիա, ապոթեոզ...

Կարմիր թելը ձգում է ափից ափ, տեսանելի և անտեսանելի «հարցասեղաները» դուրս պրծնելով Ծովագարդից մխրճում են Արեւիկ, որտեղ գրառող սարքերում դառնում են պատասխան: Մենք Գուրիչի հետ հրճանքից երանելի շշմած դէս ու դէն ենք նետում և

պարբերաբար բախում միմեանց: Ամբողջ մի ժամ տուրբուլենտութիւնը աճում է: Եւ այդ պահին ուրախալի մի անակնկալ են՝ ներս է մտնում Ռեազանից նոր ժամանած Նիստրատով Վոլոդեան (այո՛, երրորդ Վոլոդեան)՝ ենթակարմիր լազերի խողովակի արեաղարձային տարբերակը թեւի տակ: Բարեկամս, Օստապչենկոն ողորմածաբար զոհաբերել է: Մանանա երկնային:

Օգոստոսի 2- Դաշտային և բարձրլեռնային մեր գումարները մինչև օրս չկան, մատած ենք առանց կոպելի: Այն էլ, չգիտես ինչու, մենք ստանալու ենք 60 տոկոս, իսկ հիւրերը՝ 100: Չեռ են առնում՝ «Չեր ինչին է պէտք, դուք բարձրութեանը սովոր էք»: Մոսկւայից գալիս է երկրորդ Գ.Ա.Չ-51-ը: Վարորդը նորից Շուրիկ է: Այսուհետև Շուրիկները, կատերավար Վաչիկի հետ միասին, որին նրանք անվերապահ վերակնքում են Վասեայի, պերմանենտ հարքած են ու ուսանողները և ով կամենայ:

Արդէն երրորդ օրն է, ինչ ուժեղ քամին փչում է ճառագայթի երկայնութեամբ, հաւասարաչափ միախառնում օդի անհամասեռութիւնները, անհմաստ դարձնելով չափումները: Ակամայ անգործութիւնը նոր ընթացք է տալիս մտքերին. մամիները Հայաստանում եւ, յատկապէս Մեանի աւազանում, անպակաս են: Հետաքրքիր է, ինչպիսին է երկնագոյն ածուխի էներգիան: Մասնագէտ չենք, ուստի դնում ենք պարզագոյն փորձեր, կատարում տարրական հաշւարկներ և յանգնում այն տխուր եզրակացութեան, որ պետական մասը ըլտապով այդ գործը ծաւարելու դէպքում, զուցէ Մեանը համեմատաբար պակաս տուժէր:

Օգոստոսի 6-11-Շուրիչօրեայ չափումներ, զրօսանքներ և եքսկուրսիաներ տեսարժան վայրերով՝ մեր հիւրերի համար: Չիջելով Գուրիչի աշխատակից, հոյակապ ինժեներ եւ մարդու բաթումեցի Սերգէյ Լոնսաճէի թախանձանքին, կազմակերպում ենք ձկնորսութիւն՝ մեր կատերավարից փոխ առնելով երկու կարթ: Նուսկում տաս րոպէ կարթերը քաշքշելուց յետոյ Լոնսաճէի հետ միաժամանակ ուրախ բացականջում ենք... պարզում է միմեանց ենք բռնել: Արդիւնքը՝ մի հատ կորած կարթ և թեթեւ վիրատր Լոնսաճէ:

Վերջապէս ստանում ենք մեզ հասանելիք գիտարշաւային գումարը: Այն, անձամբ, հասցնում է ինտիտուտի հաշւապահ Սոֆեա Արտեմովնան: Երեկոյեան սուրճ ենք կազմակերպում: Իմ բաժակը հեթոքով նայում են ամենահոշակած գուշակները՝ Սոֆեա Արտեմովնան և «Արեւիկ»-ի բժշկուհին: Ու, թէև, տրամագծօրէն հակառակ բաներ են ասում, ամեն ինչ զարմանալիօրէն համընկնում է:

Օգոստոսի 14- Գիտարշաւի պաշտօնական փակումըն է: Երեկոյեան բանկետ և կիսակառոյցի «ռեստորանում»: Բաժակ է բարձրացնում Գուրիչը՝ Մեր ինտիտուտը գիտարշաւների բազմամեայ փորձ ունի, բայց մենք չենք յիշում այսքան լաւ կազմակերպած, հաճելի ու արդիւնատու գիտարշաւ: Կասկածանքով նայում են երեսին. կարծես չի կատակում:

*Ճար. տեսնել էք 2-ում*